№ 3 ԿԻՐԱԿԻ, 9 ՅՈՒՆՎԱՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 կոպ.

Թիֆլիսում դրվում են խմբագրատանը։

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rèdaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնն ընդունում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ։

Խմբագրատան տէլէֆոն № 253.

№ 3 ԿԻՐԱԿԻ, 9 ՅՈՒՆՎԱՐԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՑ 1911 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(39-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ռ., 10 ամսվանը 9 ռ., 9 ամսվանը 8 ռ., 8 ամսվանը 7 ռ., 7 և 6 ամսվանը 6 ռ., 5 ամսվանը 5 ռ., 4 ամսվանը 4 ռ., 3 ամսվանը 3 ռ., 2 ամսվանը 2 ռ., 1 ամսվանը 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, և միևնոյն ժամանակ 40 կոպ. նամակադրոշմ։

Հին բաժանորդին թ՝ խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rèdaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼ

ՆԻԱԶ Գ. ԳԷՈՐԳԵԱՆՑԻ

ընտանիքը սրտանով յայտնում է իր խորին շնորհակալութիւնը այն անձանց, որոնք արտայայտել են իրանց ցաւակցութիւնները՝ վերոյիշեալ ծանր կորուստի համար։
28. 1—1

ՆԵՐԿ. 22. ԱԲՈՆԵՄԵՆՏԻ ՀԱՇԻՒՑ ԴՈՒՐՍ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, յունվարի 10-ին

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

ՅՈՎ. ԶԱՐԻՖԵԱՆԻ ԲԵՆԵՖԻՍԻՆ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՆԷ

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

ԱՐԾՈՒԻԿ

Դրամա 5 արար., էջ. Լ՝օստաբը, թարգ. Ե. Տէր-Գէորգեանի

Մասնակցում են՝ տ. տ. Ագամեան, Աշխէն, Արաքս, Գուլազեան, Դուրեան-Արմէնեան, Զաբէլ, Ժամին, Մայսուրեան, Ցասմիկ, պ. պ. Աբէլեան, Ալլահվերդեան, Արմէնեան, Ահարոնեան, Սահեան, Զարիֆեան, Լաքա, Ղազարեան, Մամիկոնեան, Միրզոյեան, Ցարութիւնեան, Շահխաթունի, Ուշունի, Փիլոմեան և ուր.։

Սկիզբը երեկոյեան ժամը 8½-ին է։

Տեղերի գները բենեֆիսային են։

Գլխ. բ.ժիսեօր՝ Ա. Արմէնեան

Վարչութեան հերթապահ անդամներ (Գ. Ծուրինեան (Գ. Սքրոյեան

25. 1—1

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՅՈՒՆՎԱՐԻ 24-ԻՆ

Ցօգուտ Հայոց Հարեգործական Ընկերութեան

ԱՐՏԻՍՏ. ԸՆԿ. ԹԱՏՐՕՆՈՒՄ ԵՒ ԴԻԱՀԼԻՃՆԵՐՈՒՄ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԷՆ

I

ԹԱՏՐՕՆՈՒՄ, „ԱՐԱ ԵՒ ՇԱՄԻՐԱՄ" դրամատիկական տեսարանները առաջին անգամ—(վենդասի պատկերներով, եռաժշտութեամբ, սալօրեկամացրայով, երգացողութեամբ և պարերով) 3 գործողութիւն և 12 պատկեր, խաղացը վրդ. Բարբարի վէպից կազմեց Ց. Աբէլեան։

II

ԴԻԱՀԼԻՃՆԵՐՈՒՄ. «ԴՐԱԽՏ ԵՒ ԴԺՈՒՔ»

բարեհաճ մասնակցութեամբ մի քանի թատերասէր օրիորդների, տիկնանց և պարոնների։

ՇԱՄԻՐԱՄԻ ՀՈՐԻՒՈՒԹՔԸ

PETITES CHVAUT, տումբօչկա, բուֆէտ, սերպանտին, պօստ, պարեր։

Ներկայացման սկիզբն է երեկ. ժամը 8-ին։

Մուտքի տոմսակն արժէ 2 ռ. 20 կոպ., պարտէրի I կարգը՝ 5 ռ., գալլերէան՝ 1 ռ. 10 կ., պարտերեկոյթի տոմսն առաւօտ՝ 1 ռ. 10 կ. ժամը 11-ից յետոյ։

Ով ցանկանում է համարագրած տեղը ունենալ պարտէրում և օթեակներում, խնդրւում են մուտքի տոմսակը փոխարինել համարագրված տոմսի՝ վճարելով վերոգրեալ՝ ամեն մի տեղի համար 1 ռ.։ Բալկոնը տեղերը փոխարինվում են առանց վերադիր վճարի։

Տոմսերը համարագրված տեղերի փոխարինելու համար խնդրում են դիմել Ընկերութեան արշեանոցը, Гановская № 19, առաւօտեան ժամը 10-ից մինչև ցեր. ժ. 3-ը, իսկ ներկայացման օրը դիմել Արտիստական Ընկերութեան կասսան։

26. 0—1

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿ. „ՇՈՒԿԵՐՏ ԵՒ ԿՕՄ." ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Պետերբուրգի «Սիմէնս և Գալսկէ» ռուսական էլեքտրո-տեխնիկական գործարանների ակց. ընկ., Բերլինի «Սիմէնս և Գալսկէ» ակց. ընկ., Բրլինի «Սիմէնս Շուկերտ-Ակէգէ» ակց. ընկ., Գոլոմէնի մեքենագործական ընկ. և եղբ. «Գրոսպէյ» անգլիական գործարանի ներկայացուցիչներ։

ԷԼԵՔՏՐՕՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Դինամո-մեքենաներ, էլեքտրաշարժիչների ամեն տեսակ և չափ մշտական և փոփոխող էլեքտր. հոսանքի համար։ Էներգիայի յանձնումն տանելու և փոխելու էլեքտր. հոսանքի համար։ Էներգիայի յանձնումն որոշ հեռաւորութեան վրա։ Քաղաքներ և մասնաւոր ձեռնարկութիւններ լուսաւորելու համար կենտրոնական կայարանի սարքում։ Բանալներ լուսաւորելու համար ամեն տեսակի նպատակի համար։ Ֆօրմատօրներ։ Օդամաքրիչներ։ Օգնի օդամաքրիչներ։

ԷԼԵՔՏՐ. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Մշտական և փոփոխվող լուսաւոր. համար մէկ և բազմաթիվ հոսանքներ։ Երկաթուղային ազդանշան։

ՀԵՌԱԳՐԻ ԵՒ ՀԵՌԱԽՕՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Ընթեր հեռագիր։ Հեռագրական ապարատներ։ Ամեն տեսակ հեռախոսներ։ Պատնեշագոյժ ազդանշան գործիքներ։

ԼԱՄՊԱՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Սանկցիաներ՝ ուշագրաւ և սովորական։ Ցնտեսական լամպաներ «Տանտալ» և «Մի-պաստրոյգայինի լամպաներ»։ Լամպաներ ածխային թելով։

ՊԱՀԵՍՏՈՒՄ կան դինամո-մեքենաներ, էլեքտրաշարժիչներ, հաղորդիչներ, զանազան տեսակ նիւթեղէններ էլեքտրական կառուցուածքների համար և այլն։

ԳՐԵՑՍ-ՀՈՒՐԱՆՏՆԵՐԸ և ՆԱԽԱՀԱՇԻՒՆԵՐԸ ուղարկվում են ըստ առաջին պահանջման։

ՏԷԼԵՖՕՆ № 533. Հասցէն հեռագիրների համար՝ Шукертъ, Тифлисъ.

(Կ.) առ. № 1. 433. 26—20

ԵՐԵՒԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ
ԹԱՏՐՕՆ Ե. Բ. ՋԱՆՓՕԼԱԴԵԱՆԻ

Երևանի նախկին ակումբի շէնութիւնը, հիմնական վերաշինութեամբ, յարմարեցված է յատկապէս թատրոնի համար։ Առանձին պատուէրով բերված է բոլորովին նոր, շքեղ դեկորացիա։ Կան բուտաֆոր, բէկվիզիտ և ամեն յարմարութիւններ։

Պ.պ. սիրողները կարող են դիմել. (Въ гор. Эривань, Театръ ДЖАНПОЛАДОВА. (Тифлисъ, Контора „Энергія". Пушкинск. № 3.

(Չ. 2.) առ. 1404. 15—4

Ցանկանալով կարելիութիւն տուած լինել սակաւ միջոց ունեցող անձերին ևս համեմատաբար էժան գնով ծխելու ԱՄԵՆ ՄԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԲԱՒԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՏՈՒՈՂ ՊԱՊԻՐՕՍՆԵՐ,

Ա. ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ

ՖԱԲՐԻԿԱՆ

ԲԱՑ Է ԹՈՂԵԼ ՊԱՊԻՐՕՍՆԵՐ

„ԼԷՎ" 20 ՀԱՏԸ 5 Կ.

„ԼԷՎ" պապիրօսները այնքան ԼԱՒ են ամեն մի կողմից, որ անկարելի է մտածել, թէ որևէ, մէկը եթէ փորձել է այդ պապիրօսները, մշտական չը ծխէ դրանց, որպէս

ԱՄԵՆԱԼԱՒ ՊԱՊԻՐՕՍ

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՆՈՅՆԱՐԱՓԷՌ ՊԱՊԻՐՕՍՆԵՐԻՑ

(Չ.ու.կ.) առ. 1428. 10—5

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երկուշաբթի, յունվարի 11-ին

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ

Հիւրերը անդամների երաշխաւորութեամբ վճարում են մուտքի համար 1 ռուբլի։ Դիմակաւորները ձրի են։

Դիմակաւորների համար տոմսակները տրվում են անձամբ անդամներին և կանոնիզատներին ժողովարանի գրասենեակում։

Զինուորականների համար զգեստի ձևը սովորականն է, քաղաքացիական պաշտօնեաների համար սև սիւրտուկը պարտադիր է։

Տեղացիները կարող են լինել իրանց ազգային տարազներով։

Երեկոյթին կը նուագեն երաժշտախումբը և սազանդարները։

(առ.) 3. 1—1

Թիֆլիսի Ժողովարան

(ՀՄԵՐԱՑԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆ)

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹՆԵՐ

ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը՝ հայոց ներկայացում, զիւտրական երաժշտական խումբ, սազանդար և ՊԱՐԵՐ։

ՇԱԲԱԹ օրերը՝ սազանդար։

ԿԻՐԱԿԻ օրերը՝ սինեմատօգրաֆ։

Հիւրերը մուտքի համար վճարում են՝ անդամների յանձնարարութեամբ՝ թէ կանայք և թէ տղամարդիկ—50-ական կոպ.։

Երեկոյթների սկիզբը ժամը 8-ին։

(Կ.) առ. 1148. 0—15

ՄԵՆՔ ՈՒՐԱԽ ԵՆՔ

—

Այն խոշոր կուլտուրական ձեռնարկութիւնը, որ սկսել են Ժամհարեան եղբայրները և որի իրագործումը յանձնել են «Մշակի» խմբագիր և Հայ Դիւղատնտեսական ու Ցնայնագործական ընկերութեան նախագահ Ալ. Քալանթարին, պէտք է անկեղծ և բուռն ուրախութեամբ լցնէ «Մշակի» համակրողների և ընթերցողների սրտերը։

Այո, պէտք է ուրախութեամբ լցնէ, որովհետև գաղափարական այն մեծ գործունէութիւնը և պրոպագանդան, որ մղում է «Մշակը» ամբողջ 20 տարի, և որի նպատակն է հայ ժողովրդի և մանաւանդ գիւղական ժողովրդի բարգաւաճումը և կուլտուրայի զարգացումը, այսօր շօշափելի արդիւնքով և ձևով իրագործվում է։

«Մշակը» միշտ սերտ կերպով կապված է եղել հայ ժողովրդի, հայ գիւղացու հետ, նա տքնել է նրա բարօրութեան, լուսաւորութեան, կուլտուրայի համար։

Եւ հայ ժողովուրդը, որ շատ լաւ գիտէ գնահատել անկեղծութիւնը և անշահասէր գործունէութիւնը, միշտ արժանացրել է «Մշակին» իր լիակատար վստահութեան և միշտ նեղ ու դառն օրերին դիմել է «Մշակին» և նրան է յանձնել իր լաւագոյն իդեաների, իր կենսական շահերի պաշտպանութիւնը։ Ուստի և ամեն անգամ, երբ «Մշակը» դիմել է, կոչ է արել հայ ժողովրդին, հայ հասարակութեան օգնութեան ձեռք կարկառել տառապեալներին, աղէտեալներին, աջակցել այս կամ այն կուլտուրական ձեռնարկութեան իրագործման յօգուտ հայ ժողովրդի, նրա կոչը և յորդորը լայն արձագանք է գտել հայ ազգաբնակութեան բոլոր խաւերում։

Ժողովրդի, հասարակութեան այդ հաւատը, այդ մեծ վստահութիւնը միշտ ոգևորել, խրախուսել է «Մշակի» թէ նախկին և թէ այժմեան դեկավարներին անխնայ կերպով, տոկունութեամբ առաջ տանել «Մշակի» պարզած դրօշակը և ոտնակոխ անել բոլոր այն խոչընդոտները, որ բարձրացնում էին նրա առաջ հակառակորդները և չարամտութեամբ գործողները։

Այսօր ահա Ժամհարեան եղբայրների վեհ և խոշոր կուլտուրական նոր ձեռնարկութիւնը, որ գալիս է իրագործելու «Մշակի» տարիներով փայփայած և քարոզած գաղափարներից մինը յօգուտ և ի բարօրութիւն հայ ժողովրդի, մի նոր ապացոյց է այն վստահութեան և հաւատի, որ տածում է հայ հասարակութիւնը դէպի «Մշակը» և նրա դեկավարները։

Երբ հրապարակախօսը տեսնում է, որ իր սերմանած առողջ սերմերը պարարտ հողի մէջ են ընկնում, ծլում և առողջ հունձ տալիս, նա մխիթարված է, և այն լքումը ու յուսահատութիւնը, որ յաճախ հայ հրապարակախօսի բաժինն է, չքանում են։

Մօսկվայի մեր թղթակիցը շեշտեց այն միտքը անցեալ անգամ իր թղթակցութեան մէջ, թէ Ժամհարեան եղբայրները իրանց Իսահակ եղբօր ողբերգական մահից յետոյ կարծես մի փոքր դառնացել էին ազգից։ Այո, նրանք իրաւունք ունէին դառնանալու, որովհետև ոճրագործը, որ զրկեց կեանքից նրանց եղբօրը, դուրս էր եկել հայ ժողովրդի ծոցից։ Սակայն կսկիծի և վշտի ժամերն անցնելուց յետոյ ժամհարեան եղբայրները, իբրև սրտացաւ հայեր, իմացան, որ հայ ժողովուրդը մեղաւոր չէ իր ոճրագործ տարրերի արարքի համար, որ ոճրագործ հակումները, ձգտումները մի ժողովրդի միջից ոչնչացնելու համար ամենալաւ միջոցն է նպաստել նրա խաղաղ, կուլտուրական, մանաւանդ գիւղատնտեսական զարգացման և բարգաւաճման։

Իրանց ներկայ ձեռնարկութեամբ Ժամհարեան եղբայրները ոչ թէ լոկ բարեգործութիւն գործեցին, այլ մի մեծ, խոշոր քաղաքակրթական գործ, որի արդիւնքները անցողական չեն լինելու, այլ տևական, մնայուն հայ ժողովրդի և մեր երկրի ազգաբնակութեան համար։

Թող Հայ Գիւղատնտեսական Ընկերութիւնը նոր ոյժով, թափով, եռանդով առաջ վարէ իր միսսիան, որ Ժամհարեան եղբայրները գալիս են պսակելու։ Եւ «Մշակը», որի գործունէութեան և պրոպագանդայի արդիւնքն է այդ համակրելի ընկերութիւնը, ուրախ է այսօր հայ ժողովրդի համար և համակրանքով, սիրով ողջունում է Ժամհարեան եղբայրների այն խոշոր կուլտուրական գործը, որին ոչ ցեցերը կարող են մօտենալ և ոչ ուտիճները և որով փառաւորվել կարող է վայրգուլթեան և տգիտութեան զոհ դնացած իրանց եղբօր հոգին։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Կ. Պոլիս, 6 յունվարի

Պալատը որոշեց հարցասնդում ուղղել արտաքին գործերի մինիստրին Վօտոդաւեան տեսակցութեան հետևանքների մասին։

Հրաժարական տուած պատրիարքը Դուրեանի թեկնածութիւնը էչմիածնի կաթողիկոսութեան համար պաշտպանութիւն չէ գտնում թիւրքահայերի կողմից, որոնք տրամադիր են կաթողիկոս ընտրել ռուսահայից։

Դրութիւնը հարաւային Արաբիայում լուրջ վտանգ է ներշնչում։ Թիւրքական զօրամասերը գլխաւոր քաղաքներում շրջապատված են արաբ ապստամբներով։ Վարչական կենտրոնների հետ հաղորդակցութիւնը խզված է։ Որոշված է ապստամբ տեղերն ուղարկել մեծաքանակ զօրքեր։ Նախագծվում է ծառայութեան կոչել մի քանի պահեստի զօրամասեր։ Առ այժմ բանակցութիւնները ապստամբված ցեղերի առաջնորդների հետ ապարդիւն են։ Արաբների պահանջները չափազանց մեծ են։ Նոյն իսկ հարց է բարձրացված փոխադրել խալիֆայութիւնը Մեքքա և խալիֆի կոչումը յանձնել արաբի, մարգարէի անմիջական յաջորդներից։ Խալիֆի թեկնածու հանդէս է գալիս ապստամբ Իմամ Եահիան։ Այդօրինակ պայմաններում համաձայնութիւն հազիւ թէ կայանայ։ (Հ. Ի.)

—

Բուէնոս-Այրէս, 6 յունվարի

Պարագվայից պաշտօնական տեղեկութիւն ստացվեց, որ զինուորական մինիստրը, հարկադրելով հանրապետութեան նախագահին և փոխ-նախագահին հրաժարվելու, իրան յայտարարել է նախագահ և կազմել է նոր կաբինէտ։ (Հ. Ի.)

—

Լօնդօն.—«Daily Telegraph»-ը հաղորդում է, որ Գերմանիան արդէն դիմադրեց անգլօ-ռուսական զերիշխանութեանը Պարսկաստանում. դա պօտսդամեան տեսակցութեան կարևոր կէտերից հետևանքներից մինն է։ Եզրաշրջման միւս հետևանքները չեն կարող առ այժմ ձևակերպվել որոշ դրութեան մէջ, բայց արդէն զգացվում են ընդհանուր քաղաքական մթնոլորտում։

Ռուսական արտաքին քաղաքականութեան գիծը ընթանում է այժմ, անգլիական լրագրի ասելով, Wilhelmstasse-ով և ոչ Quoi Dorsay-ով. թէև ռուս-ֆրանսիական մտութիւնն էլ և անգլօ-ռուսական համաձայնութիւնն էլ պահում են իրանց ոյժը, բայց և այնպէս քաղաքականութիւնը այլ կերպարանք է ընդունում։

Ռուսաստանի տոնը միջազգային դուռում փոխվեց, և այդ փոփոխութիւնը զգացվում զգայուն Ֆրանսիան։

«Daily Telegraph»-ը յիշեցնում է, որ սրանից դեռ 10 տարի առաջ Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան միասին հանդէս եկան Բաղդադի երկաթուղագծի դէմ։ Անգլիան այն ժամանակ լիակատար հնարաւորութիւն ունէր ընդհարվելու Գերմանիայի հետ գծի առիթով, սակայն, Ռուսաստանի ցանկութեամբ նա խղեց բանակցութիւնները։ Իսկ այժմ Ռուսաստանը երկիւղը սրտին խօսեց Բաղդադի երկաթուղու վերաբերութեամբ, որով այդ հարցում խախտվել է, լրագրերի կարծիքով, եռակցեան համաձայնութիւնը։

—

Վլադիվոստոկ.—Այստեղ հեռագիր է ստացվել, որ Տեան-Ցզինում տեղի են ունենում ուսանողական հակայական յուզումներ։ Կան բազմաթիւ զոհեր։ Զօրքերը պաշարում են համալսարանը։ Պատճառը պարլամենտը շուտափոյթ բանալու մերժումն է։

Ֆունձդիադան եկան չինական տաս կրթված բժիշկներ։ Ոստիկանութիւնը ուժեղացված է. կանչվում են չինական զօրքեր, որովհետև ժանտախտը տարածվում է, իսկ չինացիները հրաժարվում են բժշկվել եւրոպացի բժիշկների մօտ։ Վերջին ժամանակներս մեռնում են աւելի քան 50 մարդ։ Հիւանդանում են նաև արտաքսանցիներ, գլխաւորապէս սանիտարներ։

—

Այս օրերս Վիտեբրօյում սկսվելու է սպանութիւնների մէջ մեղադրվող 44 հոգու գործի քննութիւնը։ Իշխանութիւնները ձեռք են առել արտակարգ միջոցներ, ի նպատի ունենալով այն երկիւղները՝ թէ կամօրայի մասնակիցները բռնի ճանապարհով փորձում են ազատել երդուեալ ատենակալների և վկաների վրա։ Արդէն պարզվել է, որ նրանք աշխատել են կաշառել դատաւորներից և վկաներից մի քանիսին։ Վիտեբրօյից ոստիկանութիւնը արտաքսել է բոլոր կասկածելի մարդկանց, նաև մեծադրեալների ազգականներին և բարեկամներին. գործը կը տեւէ մի քանի ամիս. կանչված են մի քանի հարիւր վկաներ։ «Տրիբունայի» ասելով մեղադրեալները անելու են քաղաքական բնաւորութեան մերկացումներ։ Հնարաւոր է, որ վերջին րոպէին գործը ընդհատվի։ Ցամենայն դէպս գործով շահագրգռված են բազմաթիւ անձեր։

—

Պետերբուրգ.—„Россія"-ն հրատարակել է Պուբիրիկովի երեսն հանած կոդէտական կօմիտէների ցուցակը։

„Рѣчь"-ը հրատարակել է Վիբորգի նահանգապետի հրահանգը կոդէտական կազմակերպութիւնների կրթական գործունէութիւնը արգելելու մասին։

Բելգիական բանկիրները վճռել են շահագործել էլեքտրաքարշի ձեռնարկութիւններ Թիֆլիսում և Տաշկենտում։

„Бирж. Вѣд."-ն հաղորդում է, որ Պետերբուրգի հայերը դէմ են Օրմանեանի թեկնածութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտօնի համար։

Ժող. լուս. մինիստրի օգնական նշանակվեց Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Շեվեկովը։ („Б.")

—

Պետերբուրգ.—Նաւթի տարիքը իջեցնելու խորհրդակցութեանը Բաղուի նաւթարդիւնաբերողների ներկայացուցիչները առաջարկեցին տարիքը դարձնել տաս կոպէկ։ Առևտրի և ֆինանսների մինիստրները համաձայնեցին։ Խորհրդակցութիւնը շարունակվում է։

Բաղուի եպիսկոպոս Գրիգորին նշանակվեց Օրլովի եպիսկոպոս։

Գրող Զիբիկովի 25-ամեայ յոբելեանը յետաձգվում է փետրվարի 17-ին։

—

Խարբին.—Ժանտախտը տարածվում է ամբողջ Մանջուրիայում։ Թուս իշխանութիւնները անզօր են։ Զինացիները անգործ են։ Երեք օրում Խարբինում հիւանդացան 41 հոգի։ Ֆուձիադանում մեռան 453 մարդ։ Խարբինում իրարանցում է։

Պարսից շահի ինամակալ Նասր-ուլ-Միւլքի Բաղուից անցնելու առիթով Թիֆլիսում գտնված պարսկահպատակ հայերը ուզարկեցին իրանց հիւպատոս Սարգար Հիմայուն մի միջոցով բարիգալուստի հեռագիր հետևեալ բովանդակութեամբ.

«Ձեզ գերազանցութիւն!

«Ձեր ունեցած շնորհը առհասարակ դէպի պարսկահպատակները մեզ համարձակութիւն է տալիս խնդրելու ձեզ ներկայանալ նորին պայծառափայլութեան Նայիբ-ուլ-Սալթանէին (բեկենին) և հաղորդել, որ Թիֆլիսում եղած պարսկահպատակ հայերը յայտնում են սրտագին բարիգալուստ և մաղթում են Աստուածանից, որ օգնէ նրան բարեկարգելու մեր սիրելի հայրենիքի գործերը»։

Ի դիմաց պարսկահայերի՝

Խ. Արզումանեան
Ց. Շանդալչեան
Գ. Աֆթանդիլեան

Այդ հեռագրին ի պատասխան շնորհաւորողները ստացան Բաղուից հետևեալ հեռագիրը Նասր-ուլ-Միւլքից (նաև Նայիբ-ուլ-Սալթանէ կամ խնամակալ).

«Սիրելի շնորհակալ եմ ձեզանից ձեր բարեմաղթութիւնների համար ընդհանուր հիւպատոսի միջոցով։ Երջանիկ եմ հաստատելու ձեր անձնուէր կապը՝ հայրենիքին, որի վերածնութիւնը կախված է իր բոլոր զաւակների միահամուռ աշխատութիւնից»։

Նասր-ուլ-Միւլք

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԴԷՊՔԸ

Հետզհետէ պարզվում են Իզմիրլեան Կաթողիկոսի հրաժարականի մանրամասնութիւնները։ Երբ «Մշակի» մէջ տպագրվեց առաջին անգամ տեղեկութիւն այդ հրաժարականի մասին, եղան առարկողներ, թէ չը պէտք է հրատարակութեան տալ այդ տեղեկութիւնը։ Սակայն դեռ դեկտեմբերի 21-ին այդ հրաժարականի քնագիրը տպվում է Կ. Պոլսի «Ժամանակ» թերթի մէջ և հրատարակողը Պալաքեան վարդապետն է իր մերկացումների մէջ։

Տեսնենք ինչպէս է պատմում Պալաքեան վարդապետը այդ դէպքը։

«Վերջապէս հասան օծման օրերը և անա օծումէն 5 օր առաջ կանչելով առժամեայ դիւանապետ Բարլէն վ. Աղաւէլեանը՝ գրուած հեռագիր մը կուտայ հրամայելով որ ռուսերէնի թարգմանէ և իրեն բերէ ստորագրելու համար։

«Ասուած իմ, ինչ թուղթ, իր հրաժարականը կուտար հայրապետական աթոռէն Ռուսիոյ Ցարին ուղղեալ սա հեռագրով.

Ամենապատուելի Կայսր Նիկոլայ Բ. եւ այլն

Շրջապատուած արտաքին եւ մասնաւոր ներքին ծանր դժուարութիւններէ, անկարելի կը զտնեմ իմ պաշտօնավարութիւնս ներկայ շքոթ եւ անտանելի կացութեան մէջ. հետեւապէս կը խնդրեմ ամենասուրբ Ամենայն Հայոց հրաժարականը Հայրապետական Մայր Աթոռէն, քանի դեռ օծուած չեմ եւ կաղաչեմ որ անմիջապէս նոր ընտրութեան հրաման տաք։

«Վախտի հարուածի մը պէս եկաւ գլխուս երբ այս հրաժարական հեռագիրը ընթերցայ։ Շատ չը զարմացայ, զի տրամաբանական հետևանքն էր իր կրած դառն յուսախաբութեանց և ամենօրեայ անարգանքներուն ու տառապանքներուն»։

Ապա Պալաքեան վ. պատմում է, որ շնորհիւ իր և մի քանի միաբանների յորդորանքին և ազաչանքին, Իզմիրլեան չուզարկեց հրաժարական հեռագիրը և ընդունեց օծումը։

Ինչպէս երևում է, սա առաջին հրաժարականն է և Պալաքեան վ. տեղեկութիւն չունի յետնագոյն հրաժարականների մասին։ Մեր ունեցած տեղեկութիւնները, որ հաստատում էին նա փոխվում...

Աչքիս առաջ հակայ ժայռեր էին անկվում, գետինը պատռվում էին ու բացվում առաջս կանաչ կախարդիչ հովիտներ...

Երբեմն ժայռերը ետ էին քաշվում. այդ ժամանակ անծայր հեռաւորութեան մէջ երևում էին ժպտացող լճեր, կղզիներ ու սպիտակ քաղաքներն անտառներով՝ շրջապատված...

Ցանկարծ այդ բոլորը անհետանում է՝ ու դառնում սև, ամեհի ժայռեր...

Այդ երազից մի քանի օր յետոյ ես էի Իւնգիրաուի բարձունքներում։

Սակայն այն բոլոր հրաշալիքները, ինչ ես տեսայ այնտեղ, խոր յուսախաբութիւն միայն պատճառեցին ինձ։ Երազս աւելի գեղեցիկ էր, քան այն, ինչ ես տեսայ։

Այդ ժամանակից սկսած յաճախ է պատահում ինձ հետ, երբ ես ցնորում եմ մի բանի մասին, որ դեռ չեմ տեսել, զգացել կամ ապրել. գեղեցիկ տեղերի, քաղաքների ու գեղեցկուհիների մասին ես այդ բոլորին տեսնում եմ երազումս այնպիսի զմայլելի ու թովիչ գեղեցկութեամբ լցված, որ յետոյ իրականութիւնը այլ ևս ոչ մի հրապոյր չէ ներկայացնում ինձ համար։

Երազները թունաւորում են կեանքից ստացած վայելքները։

Երազում ես տեսայ գեղեցիկ պէյզաժներ, հրաշալի տեսայ փառահեղ պալատներ, եռաբազում վայելեցի քաղցր և կրքոտ համբոյրներ...

Արդեօք այդ նրանից չէ, որ մեր հոգու ստեղծագործական կարողութիւնը վեր է բնութեան ստեղծագործական կարողութիւնից։

Վիկտոր Մանուէլեան

ՍԱՆԴՈՒՂՔ

Մի անգամ սանդուղքի աստիճանները սկսեցին իրար հետ վիճել։

— Տաժանակիր կեանք է, գանգատվեց ներքինը, — ինչեր ասես որ ես չեմ կրում։ Ամեն մի կեղտոտ սրբում է քեզնով իր ցեխոտ կօշիկները, ազտոտում է քեզ, լուացվում է քեզնով։

— Ոչինչ չի կարելի անել, սիրելիս, — պատասխանեց նրան երկրորդ աստիճանը։ — Միշտ այդպէս կը լինի, քանի աշխարհումս կը լինեն սանդուղքներ, նշանակում է, այսպէս է, արդէն քո վիճակը։

Ճշմարիտ չէ, հարևանուհի, — դարձաւ նա դէպի երրորդ աստիճանին։

— Հարևանուհի՞, — բողոքեց վերջինը։ Ես քեզ ինչ հարևանուհի իմ։ Կամ թէ դու չե՞ս տեսնում, որ ես բարձր եմ քեզնից։ Քեզ հաւասարների հետ կարող ես խօսատ ազատ լինել, և ոչ թէ ինձ հետ։

Չորրորդ սանդուղքը, որի քունը հէնց այդ ժամանակ տարել էր, այդ կուրից արթնացաւ։

— Էյ, դուք, խառնակիչներ, — բարկացած նա բղաւեց, — մի քիչ չէ կարելի ցածր։ Ժամանակ է ձեզ իմանալ, որ մենք ձեզանից բարձր ենք, և կարելի է մի քիչ հուպ տալ լեզուներդ, երբ հանգստանում են մեծերը...

Բայց այստեղ հինգերորդ աստիճանը նրան կտրեց։

— Բերանդ էլ շատ մի բաց արա, աղաւնեակ։ Եւ մի մոռանար, խնդրեմ, որ ես եմ վերև, և ոչ դու։

— Ոչ, ես, — բղաւեց վեցերորդը։

— Լաստած, լիրբ, — հայհոյեց եօթերորդը. Ներս խծկվեց օրինաւոր հասարակութեան մէջ և կարգադրում է։

— Իսկ դու ինքդ ո՞վ ես. — կանչեց ութերորդը։ Լռիր, թէ չէ ես քեզ հետ կը խօսեմ։

— Ձեզ ինչպէս է դուր գալիս այս տխասակ ձևը, — դարձաւ ինները տասներորդին։ Ամեն մի անպիտան ներս է պրծնում տիրուհի լինելու։ Ես այդ տականքը ատում եմ։

Բայց տասներորդը նրան ոչինչ չը պատասխանեց։ Եւ այսքան վեհութեամբ լռել էին տասմէկերորդը, տասներկուերորդը և տասներեքերորդը։

Եւ միայն սանդուխքի ամենաբարձրից լսվեց վերջինի հրամայողական ձայնը, ամենաբարձր աստիճանից։

— Կարգը պահանջում է, որ իւրաքանչիւր աստիճան բարձր լինէր միւսից, իսկ մէկը — բոլորից բարձր։

Եւ, աչքերը վերև բարձրացնելով առաստաղին շարունակեց.

— Օ՜հ, ես ինչպէս հնորհակալ եմ հիւանդից, դնելով ինձ ձեր բոլորից վեր։ Նայեցէք այստեղ և ասացէք, դուք առանց ինձ ինչ կը լինէիք, առանց գլխի։ Իսկ մի՞թէ ես ձեր գլուխը չեմ։

Աստիճանները այդ հարցին ոչինչ չը պատասխանեցին։ Միայն մէկից դէպի միւսը հանդարտ շշուկ անցաւ։

Իսկ հին աւելը, որ կանգնած մնացած էր անկիւնում, սանդուխքի տակին, ծիծաղից գլորվեց։

— Սպասեցէք հոգեակներս, այժմ ես ձեզ բոլորիդ կը հաւասարեցնեմ։

Եւ բոլոր աստիճանները, սկսած ամենաբարձրից մինչև ամենաներքինը, երեսներին երկու անգամ քսվեց։

Թարգմ. Ցովհ. Դանիէլեանց

«Daily Telegraph»-ը յիշեցնում է, որ սրանից դեռ 10 տարի առաջ Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան միասին հանդէս եկան Բաղդադի երկաթուղագծի դէմ։ Անգլիան այն ժամանակ լիակատար հնարաւորութիւն ունէր ընդհարվելու Գերմանիայի հետ գծի առիթով, սակայն, Ռուսաստանի ցանկութեամբ նա խղեց բանակցութիւնները։ Իսկ այժմ Ռուսաստանը երկիւղը սրտին խօսեց Բաղդադի երկաթուղու վերաբերութեամբ, որով այդ հարցում խախտվել է, լրագրերի կարծիքով, եռակցեան համաձայնութիւնը։

—

Վլադիվոստոկ.—Այստեղ հեռագիր է ստացվել, որ Տեան-Ցզինում տեղի են ունենում ուսանողական հակայական յուզումներ։ Կան բազմաթիւ զոհեր։ Զօրքերը պաշարում են համալսարանը։ Պատճառը պարլամենտը շուտափոյթ բանալու մերժումն է։

Ֆունձդիադան եկան չինական տաս կրթված բժիշկներ։ Ոստիկանութիւնը ուժեղացված է. կանչվում են չինական զօրքեր, որովհետև ժանտախտը տարածվում է, իսկ չինացիները հրաժարվում են բժշկվել եւրոպացի բժիշկների մօտ։ Վերջին ժամանակներս մեռնում են աւելի քան 50 մարդ։ Հիւանդանում են նաև արտաքսանցիներ, գլխաւորապէս սանիտարներ։

—

Այս օրերս Վիտեբրօյում սկսվելու է սպանութիւնների մէջ մեղադրվող 44 հոգու գործի քննութիւնը։ Իշխանութիւնները ձեռք են առել արտակարգ միջոցներ, ի նպատի ունենալով այն երկիւղները՝ թէ կամօրայի մասնակիցները բռնի ճանապարհով փորձում են ազատել երդուեալ ատենակալների և վկաների վրա։ Արդէն պարզվել է, որ նրանք աշխատել են կաշառել դատաւորներից և վկաներից մի քանիսին։ Վիտեբրօյից ոստիկանութիւնը արտաքսել է բոլոր կասկածելի մարդկանց, նաև մեծադրեալների ազգականներին և բարեկամներին. գործը կը տեւէ մի քանի ամիս. կանչված են մի քանի հարիւր վկաներ։ «Տրիբունայի» ասելով մեղադրեալները անելու են քաղաքական բնաւորութեան մերկացումներ։ Հնարաւոր է, որ վերջին րոպէին գործը ընդհատվի։ Ցամենայն դէպս գործով շահագրգռված են բազմաթիւ անձեր։

—

Պետերբուրգ.—„Россія"-ն հրատարակել է Պուբիրիկովի երեսն հանած կոդէտական կօմիտէների ցուցակը։

„Рѣчь"-ը հրատարակել է Վիբորգի նահանգապետի հրահանգը կոդէտական կազմակերպութիւնների կրթական գործունէութիւնը արգելելու մասին։

Բելգիական բանկիրները վճռել են շահագործել էլեքտրաքարշի ձեռնարկութիւններ Թիֆլիսում և Տաշկենտում։

„Бирж. Вѣд."-ն հաղորդում է, որ Պետերբուրգի հայերը դէմ են Օրմանեանի թեկնածութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտօնի համար։

Ժող. լուս. մինիստրի օգնական նշանակվեց Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Շեվեկովը։ („Б.")

—

Պետերբուրգ.—Նաւթի տարիքը իջեցնելու խորհրդակցութեանը Բաղուի նաւթարդիւնաբերողների ներկայացուցիչները առաջարկեցին տարիքը դարձնել տաս կոպէկ։ Առևտրի և ֆինանսների մինիստրները համաձայնեցին։ Խորհրդակցութիւնը շարունակվում է։

Բաղուի եպիսկոպոս Գրիգորին նշանակվեց Օրլովի եպիսկոպոս։

Գրող Զիբիկովի 25-ամեայ յոբելեանը յետաձգվում է փետրվարի 17-ին։

—

Խարբին.—Ժանտախտը տարածվում է ամբողջ Մանջուրիայում։ Թուս իշխանութիւնները անզօր են։ Զինացիները անգործ են։ Երեք օրում Խարբինում հիւանդացան 41 հոգի։ Ֆուձիադանում մեռան 453 մարդ։ Խարբինում իրարանցում է։

—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԱԶ

(Իւրիյ Ժուլովսկիից)

—

Երբեմն ես մտածում եմ՝ իրականութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ցնորքի մի նմանութիւն։ Ես այդ զգացի այն ժամանակ, երբ պատրաստվում էի Ալպեան լեռները բարձրանալու։

Ես երազ տեսայ։

Գնացքը՝ օտարոտի ու փայլուն վագոններից կազմված, կենդանի շոգեմեքենայով, առանց գծի ու առանց ճանապարհի, դէպի հեռուն էր թռչում։ Զորս կողմ գոյնզգոյն ու վիթխարի ժայռեր էին ցցված, որոնց ստորոտները նուրբ և սքանչելագեղ քարերով էր պատած, իսկ կատարները ալմասի պէս պայծառում էին ու ծիածանի գոյներով վառվում...

Վայրի, անտոմոր, դիւթիչ մի գեղեցկութիւն։

Գնացքը դէպի վեր էր սլանում քարերի վրայից թռչելով, երբեմն թեքվում էր մի կողմի վրա, երբեմն բարձրանում ու ցածրանում, և այդպէս շարունակ առաջ վազում, փնչալով ու սուրալով։ Իսկ շրջակայ տեսարանները, դիւթական լապտերի պէս, զորդեցին մեզ էջմիածնում, ցոյց են տալիս՝ որ հանգուցեալ Հայրապետը օծումից յետոյ ևս երկու անգամ որոշել է հրաժարական տալ, բայց առաջին անգամ դիւանապետ Յուսիկ վարդապետ, երկրորդ անգամ դիւանապետ Բագրատ վարդապետ աղաչել են յետ կանգնել իր դիտաւորութիւնից և նա առժամեայ կերպով յետ է կացել։ Վերջին հրաժարականների գլխաւոր պատճառն եղել է այն լուիրը, անարգ հալածանքը, որ դաշնակցականները թէ իրանց օրգանների («Ազատամարտ», «Հայրենիք» և այլն) և թէ թռուցիկների միջոցով սկսեցին Իզմիրլեանի դէմ նրա համար, որ նա կօնդակ գրեց և արգելեց միտինգների կազմումը եկեղեցիներում և Տաճատ սրբկայ վարդապետին կարգալոյծ արեց։ Իրանց զազրելի հայհոյանքները դաշնակցականները հասցրել էին այնտեղ, որ մեղադրում էին Կաթողիկոսին կաշառակերութեան, սիմոնականութեան մէջ և այդ հանգամանքն առիթ էր տուել հանգուցեալ Կաթողիկոսին բացագանչել. «Մաքուր անուն մը ունէի, տն ալ կաշխատեն ազատել»։

ՆՈՐԱՆՈՐ ՑԱՑՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Կ. Պոլսի «Ժամանակ» թերթի մէջ տպված են «Բոլոր ովին նոր եւ քստմնաստուտ յայտնութիւններ» վերնագրով Գրիգորիս վ. Պալաքեանի մերկացումները հանգուցեալ Հայրապետի էջմիածնի կեանքի նկատմամբ։ Այդ մերկացումները, եթէ միայն ճիշդ են նրանք, սաստիկ մեծ ստուերներ են ձգում էջմիածնի ամբողջ միաբանութեան վրա, սկսեալ տեղապահ սրբազանից և կաթողիկոսի մօտ խորհրդականներից մինչև յետին միաբանը։ Եթէ հաւատանք Պալաքեան վարդապետին, հէնց առաջին օրից որ կաթողիկոսը ոտքը դրեց էջմիածին, այն է 1909 թ. յունիսի 28-ին, ոչ միայն ջերմ ընդունելութիւն չը գտաւ միաբանութեան կողմից, այլ և ամեն տեսակ խոչընդոտներ կուտակեցին նրա առաջ, այնպէս որ Կարապետ եպիսկոպոսի վարմունքը եկաւ միայն մի կաթիլ ևս աւելացնելու ընդհանուր դառնութեան բաժակի մէջ։

Ահա Պալաքեան վ.-ի մերկացումները.

1) Երբ յունիսի 28-ին, 1909 թ., հանգուցեալ Հայրապետը, սաստիկ յոգնած երկար ճանապարհորդութիւնից, հասաւ էջմիածին, նա չը գտաւ վեհարանում նոյն իսկ մի հանգիստ անկողին՝ իր յոգնութիւնից հանգստանալու համար։ Եւ երբ Պալաքեան յանդիմանեց այդ առիթով նրանց, որոնց պարտականութիւնն էր հոգալ, ստացաւ այսպիսի պատասխան. «Կարծում էինք, որ Հայրապետը Պետերբուրգից կը վերադառնայ Պոլիս»։

2) Երբ երկու շաբաթ յետոյ հանգուցեալ Հայրապետը գնաց Բիւրական ամարանոցը, չը կարողանալով դիմանալ էջմիածնի տօթին, և այդտեղ հիւանդացաւ, էջմիածնում այդ ժամանակ գտնվող 40-ից աւելի արքեպիսկոպոս, եպիսկոպոս և վարդապետ միաբաններից կամ սինօդի անդամներից ոչ ոք չեկաւ կաթողիկոսի այցելութեան։ Կաթողիկոսին միայնակ թողել, լքել էին Բիւրական։ Տեսնելով որ Կաթողիկոսը ծանր հիւանդ է և ոչ ոք վանքից չէ գալիս, նա, Պալաքեան վարդապետը, մի ոստիկան զինուորի ձեռքով նամակ գրեց տեղապահին և յայտնեց եղելութիւնը, բայց այս անգամ ևս միայն վանքի բժիշկը եկաւ և ուրիշ ոչ ոք։ Այնուհետև անցան օրեր և շաբաթներ և դարձեալ ոչ ոք վանքից չեկաւ հարցնելու, թէ ինչպէս է Հայրապետի առողջութիւնը։

Էջմիածնի միաբանութեան այդ սառն անտարբերութիւնը այնքան խոր ազդել էր թշուառ Հայրապետի վրա, որ մի օր ասել է Պալաքեան վարդապետին այս խօսքերը.

Զաւակս, ասոնք իմ մահուանս կը սպասեն. երանի՞ թէ մեռնէի, իրենք ալ ազատէին, ես ալ ազատէի...

4) Էջմիածնի միաբանութիւնը, — դարձեալ և միշտ ըստ Պալաքեան վարդապետի — բաժանված էր երկու կուսակցութիւնների. որոնք խուլ պայքար էին մղում միմեանց դէմ, բայց երկուսն էլ հաւասարապէս վրդովացնում էին Իզմիրլեանին, դառնացնում նրա կեանքը կամ՝ «երկու սարի մէջ առած նորընտիր ս. Հայրապետը Իզմիրլեան կը ասնչէին ու կը տանջէին, մինչև որ գլուխը կերան»։ Առաջին կուսակցութիւնը բաղկացած էր Գէորգեան ճեմարանի շրջանաւարտ վարդապետներից, որոնք աշխատել էին Օրմանեանի կաթողիկոսութեան համար (ակնարկ՝ Կարապետ (այժմ եպիսկոպոս), Գաբրիէլ, Յուսիկ, Երուանդ, Բենիկ վարդապետների վրա). Երկրորդ կուսակցութիւնը բաղկացած էր դրսեցի կամ ոչ ճեմարանցի վարդապետներից, որոնք թէև Իզմիրլեանի ընտրութիւնը աջողացնելու աշխատել էին, բայց «ոչ թէ նրան անկեղծօրէն համակրած ըլլալուն, այլ ապագայ պաշտօնները և աստիճանները ակնկալելեամբ» (ակնարկ՝ Մեսրոպ, Խորէն (այժմ եպիսկոպոսներ) և Բարգէն վարդապետի վրա)։

5) Մի օր, երբ դարձեալ այդ միաբանները վրդովվել էին Իզմիրլեանին, նա ասաց Պալաքեան վարդապետին.

«Զաւակս, ասոնց հետ գլուխ չի պիտի կրնամ ելլել, ասոնց մէջ ոչ եպիսկոպոս կայ, ոչ վարդապետ՝ ամենքն ալ մէկ-մէկ կաթողիկոսներ են»։ Եւ երբ Պալաքեան վ. խորհուրդ է տալիս Իզմիրլեանին խստութեամբ մաքրագործումի սկսել, նա պատասխանում է.

«Ասոնց հետ ինչպէս գլուխ ելնեմ. ասոնք մարդը կը լքմնցնեն»։ Սրանով Իզմիրլեան հասկացրել է Պալաքեան վարդապետին և յետոյ յայտնել է նաև, որ «Մակար կաթողիկոսին համար կասկածներ և զրոյց կայ եղել թէ խեղդամահ եղած է»։

6) Ոչ միայն էջմիածնի բոլոր միաբանները անխտիր, այլ և ճեմարանի աշակերտները վշտացնում էին Կաթողիկոսին. մի օր նրանք գնացել էին վեհարան, ինքնագլուխ մտել Կաթողիկոսի սենեակը և «անպատկառութեամբ պահանջ դրել էին Հայրապետին, որ Նա, Կաթողիկոսը հպատակի իրանց կամքի առաջ և կատարէ իրանց խնդրանքը»։ «Եւ թշուառ Հայրապետը յուզված ասաց.— «Մինչև հիմա եպիսկոպոսները ու վարդապետները երեսիս կը պոռային, այժմ ճեմարանի աշակերտներն ալ սկսան պոռալ»։ (Թիւրիմացութեան տեղիք չը տալու համար պէտք է ասենք, որ այդ դէպքը վերաբերում է այն ժամանակին, երբ Մեսրոպ և Խորէն եպիսկոպոսների ղեկավարութեան տակ գտնվող ճեմարանի ղեկավար տեսուչն էր Ռոստոմեան անունով պարոնը)։

7) Վերջապէս, կարծես այս բոլոր յուզումներից միջոցները բաւական չէին, ահա Պոլսից և Երուսաղէմից տպագրված թռուցիկներ էին գալիս Հայրապետին և միաբանութեան, բայց ինչ թռուցիկներ... «և ոչ իսկ Զօլա այնքան վրան բաց և լպիրշ ամբաստանութիւններ պիտի ուզէր ընել որեւէ անձի մասին»... Թէև Պալաքեան վարդ. աշխատում էր, որ Կաթողիկոսի ձեռքը չընկնեն այդ թռուցիկները, բայց մի քանիսը ընկել էին նրա ձեռքը և մահու չափ վշտացրել նրան։

Դժբաղդաբար, Պալաքեան վարդապետ, գուցէ խոհեմութեամբ, չէ յայտնում ովքեր էին թռուցիկների հեղինակները։

8) Հաղիւ Կաթողիկոսն ընդունեց օծումը, «ահա ծայր տուին ժամ առաջ եպիսկոպոս ձեռնադրուելու համար ազդեցիկ վարդապետներու խաղերը։ Պայքարը բուռն էր, զի իւրաքանչիւր կուսակցութիւն իր խումբէն կուզէր ձեռնադրել տալ եպիսկոպոս, որպէսզի իր ազդեցութիւնը զօրանայ Մայր Աթոռէն ներս ու դուրս»։

Ահա որոնք են ընդհանուր առմամբ Պալաքեան վարդապետի մերկացումները, որոնք սոսկալի արատ են ձգում էջմիածնի միաբանութեան և նոյնիսկ հանգուցեալ Կաթողիկոսի մօտիկ խորհրդականների վրա։ Այդ միաբանութեան, այդ խորհրդականների և մանաւանդ սրբազան տեղակալի վրա պարտաւորութիւն կայ բացատրել հայ ժողովրդին, թէ որքան ճշմարիտ են Պալաքեան վարդապետի մերկացումները, որոնք, յամենայն դէպս մի բան են ապացուցանում, թէ որքան միակողմանի, որքան աչառու և շահախնդրական էր «Հորիզոն» լրագրի ղեկավարների ձգտումը — բոլոր մեղը բարդել մի այն մի անձի՝ Կարապետ եպիսկոպոսի վրա, որ կարող էր դառնութեամբ այդպէս լցված բաժակի վրա միայն մի կաթիլ աւելացնել։

ՕՐՄԱՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ԲՆՆԻՉ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

—

Այս պաշտօնական տեղեկագրի առաջին մասը տպված է «Ժամանակ» թերթի դեկտեմբերի 20-ի համարի մէջ։

Կարելոր ենք համարում համառօտ կերպով ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին նրա հետ։

Տեղեկագրից երևում է, որ Օրմանեան ամբաստանվում է եղել հետևեալ արարքների մէջ։ Ամբաստանողներն եղել են. 1) Պալաքեան Գ. վարդապետ, 2) Դուրեան վարդապետ, 3) Աշճեան քահանան, 4) Եքսէրճեան քահանան, 5) Ղազարոս էֆ. Զըվլաքեան։

Ահա ամբաստանութեան կէտերը.

1) Օրմանեան իրան հակակարծիք դտընվող ժողովականներին սպառնացած է վտարել ժողովից։

2) Օրմանեան յանդուգն կերպով խօսող և արդարացի կերպով քննադատող ժողովականներին կանչելով իր սենեակը, յանդիմանել է և յանձնարարել է լռել՝ երկիւղ ազդող խօսքերով։

3) Օրմանեան մեղաւոր է Սաւոնի երկրորդ Ջարդին վերաբերեալ պաշտօնական տեղեկագիրների անյայտացման մէջ։

4) Օրմանեան լռութիւն պահած է և ոչ մի միջոցի չէ ձեռնարկած Աղթամարայ վանքին ամրակոծման և Վանի մէջ կատարված սպանութիւնների ու թալանի ժամանակ և չէ բողոքել ուր հարկն է։

5) Օրմանեան մեղադրվում է, որ Միջագիւղի և Պէշիկթաշի գերեզմանատունների խնդրին մէջ ազգային շահերին հակառակ ընթացք է ունեցել, սպառնացել է այն ժողովականներին, որոնք հակառակ էին գերեզմանատունների յանձնման թիւրքաց կառավարութեան և պնդել է, որ յանձնումը կատարվի կամ աշխատել է փութացնել յանձնումը։

6) Օրմանեան անսիրտ, բոլորովին անկօրրեկտ գտնված է բանտարկեալների և աքսորեալների մասին. բանտերի մէջ խեղդված, չարչարանքների տակ սպանված և այրած դիակներ պատրիարքարանին յանձնուեցան, նա չը բողոքեց, կառավարութեան մօտ իր հաշիւները չը խանգարելու համար...

Այս ամբաստանութիւնն անող Զալաքեան էֆէնդին բացի դրանից մեղադրում է Օրմանեանին և իբրև զեղծարար և ամեն չարեաց մակարդ։

Ինչպէս յանձնաժողովը, քննելով այս ամբաստանութիւնները, լսելով Օրմանեանի բանաւոր և գրաւոր բացատրութիւնները, նրա առաջ բերած փաստերը, եկել է այն եզրակացութեան, որ վերոյիշեալ 5 ամբաստանութիւնների մէջ դատապարտութեան ոչ մի հիմք չը կայ և պէտք է թողնել այդ ամբաստանութիւնները անհետևանք։

Վեցերորդ մեղադրանքի մասին որոշումը պարունակող «Ժամանակի» համարը դեռ ստացած չը լինելով, կը հաղորդենք յաջորդ անգամ, տալով նաև տեղեկագրի ջարունակութիւնը։

ՊՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պոլիս, 22 դեկտեմբերի

Ցունաց պատրիարքը, Դուրեան սրբազանի գրած է հետևեալ ցուցակական նամակը, անշուշտ յունարէն լեզուով, որուն թարգմանութիւնն է հետևեալը.

Ամենապատիւ
Տէր Գ. Եղիշէ Ա. Գրիգորեան
Վեհաց Տէր Հայոց Թիւրքիոյ
Ներկայ Գանձապետ Հայոց Թիւրքիոյ
Ձեր Սրբազնութեան վիճակի մասնաբաժինը, որով նոյնութեան կոչել կրկին ենք Ս. Օծութեան կը գուժուէր կրնայք Ս. Ամենայն Հայոց Գանձարքին ու Կաթողիկոսի, անմոռանալի Մատթէոս Բ.-ի, որուն Բիւրատոսի հանգուցեալ Տէր Գրիգոր Եպիսկոպոս Տարսեանի Հայոց Մուսա Լեռանցը և հայ ազգեղցիին ու առաջապահ հայ ազգին համար ըրած աբի Չանքերը ծանօթ են մենք։

«Թէև չկամպէս կը ցանկայինք անձամբ ներկայ գտնուիլ վաղը սգահանդէսին, որ տեղի վիճի ունենայ իր յիշատակին համար և իբրև համակրական ցոյց հայ ազգին ու եկեղեցիին կողմէ, բայց պիտի չկրնանք ոտնի պատճառաւ, և մասնաւոր պատուիրակութիւն մը պիտի ղրկենք։

«Կաղօթենք հանգուցեալ յոյժ յարգելի եկեղեցականին հոգու յաւիտենական հանգիստին համար՝ մաղթելով երկնային Թարուութիւն, ամէն բարիք և յաջողութիւն ի Ցիսուս Քրիստոս։

«Ձեր յոյժ սիրելի եղբայրութեան
Սիրեցեալ եղբայր ի Ցիս. Քրիս.
Եօաքիմ

18 դեկտ. 1910 Պատրիարք Կ. Պոլսոյ»

«Տիեզերական» Պատրիարքին նամակը ու ցաւակցութիւնը մեր ընդհանուր սուգի առթն, իր ցանկութիւնը անձամբ ներկայ գտնուելու սգահանդէսին, յատուկ պատուիրակութիւնով մը իր փոխանորդութեան գոյութիւնը մեր եկեղեցին մէջ, անհուն համակրանքով կը պատն մեզ դէպի Նորին Բարձր Սրբութիւն և յոյն ազգը։

Յովակիմ պատրիարքի համակրութիւնը Դպի հայերը վաղուց է. կը սկսի Ներսէս Վարժապետեանի օրով, իր առաջին պատրիարքութեան տեն։ Այդ համակրանքը, Հայաստին գնահատական նամակէ եաքը, ինչպէս գրած եմ նախընթաց թղթակցութեան մէջ, համակրանքէ աւելի գոյն մը ստաց է իր մէջ, թէ մեր եկեղեցիի և թէ ազգին համար։

Ու դժբաղդաբար, ուրիշ համազգի պատարք մը, Թէրզեան, հակառակ իրեն համա ստծուած մեր հանրային բոլոր համականքին, ազգին ընդհանրական սուգին վ՝ ծայրայեղօրէն վիրաւորեալ դիրքի մէջէն գտնուեցաւ, յայտարարելով թէ չի կրնր ներկայ գտնուիլ ոչ ներսիտիկոսի մը սգահանդէսին և ոչ հերձուածող եկեղեցիի մէջէ։

Հայաթոլիկ հասարակութիւնը, չափազանց յուզուած Թէրզեանի այսօրինակ ըմբռնմի և վարմունքի դէմ, բուռն արտայայտութիւններ կընէ ամէն դասակարգի մէջ. խրթերու մէջ յայտնապէս բողոք կը բառնայ յօդուածագիր մը «Արևելքի» մէջ կըսէ թ Սագըզ-Աղաճի պատրիարքը, ուրախանալ զգացումներով համակուած դէպի Վանկ՝ ուրիշ դեռ նոր ստացուած է 2,000-ական, այդ վարմունքով ցանկացած է իր հատարմութիւնը դնել պապի ոտքերուն առ։

Վենետոյ և Վիէննայի Պոլսի միաբանութեանդամները խորապէս յուզուած են Թէրզան պատրիարքի դէմ։

Մամոս ցաւագին արտայայտութիւններ կընէ՝ հակառական խօսքեր ուղղելով հայ-կաթոլիկ հանուրքին, ժողովականներուն, որոնք ոլորվին կը պահարակեն պատրիարքի այդ տգեղ վարմունքը։

Ա թէ հակասութիւն։ Հասունէ ու Ա-զարեան պատրիարքէ հետքը, որոնց բոլոր ուշադրութիւնը լարուած եղաւ ազգին մեծամանութեան վնասել, մենք ամենքս ալ ին յոյսը ունեցած էինք որ Թէրզեան լաբիրաբ կը դարմանէր բացուած վէրքերը, սկսելով նոր շրջան մը երկու այլազաւան համազգի տարբերու մէջ։

Ու մեր այդ յոյսերը կեդրոնացած էին այն գործնական հաւատիքներուն վրայ, որ տուաւ ինքը անձամբ Թերզեան եպիսկոպոս՝ Ադանայի մէջ ունեցած առաջնորդական պաշտօնով։ Այնտեղ ոչ մեր եկեղեցին «հերձուածող» էր իր մտքի ու հաւատքի առջև, ոչ հայերը հերետիկոս էին։ Իսկ այժմ. վոխուած է ամէն ինչ, իր աչքին առջև, պատրիարքական աթոռի բարձունքէն, մեր եկեղեցին հերձուածող է ու հայերը ալ՝ հերետիկոս՝ կաթողիկոսէն սկսեալ։

Հայ-կաթոլիկներէն բանիմաց ժողովականներ, Թէրզեանի՝ առաջնորդական ու պատրիարքական ուղղութեան մէջ եղած ակներև հակասութիւնները չկրնալով ըմբռնել, դիտողութիւններ ըրած են Թէրզեանին։

Իսկ ան, ինքզինքը չըմեղելու համար, բան է թէ Ադանայի մէջ հետեւած էր անիրական ուղղութեան, որովհետև այն տեսն, իր հաշիւովը, մեծ հունձքի ակնկալութիւն ունեցած էր՝ Հռոմի փարախը նոր բազարձ հոգիներով խճողելու համար։

Ու կերևի, դժբախտաբար, որ ամենքս ալ խաբուած ենք եղեր, նախ՝ խաբուեցան մեծապէս հայ-կաթոլիկներու մէջ անոնք, որ ազատական դրդումներով մղուած, ոգի ի բուին աշխատեցան՝ Համիդէ զրեթէ հալածական եկեղեցական մը բարձրացնել պատրիարքական աթոռ, խաբուեցանք մենք ամենքս ալ՝ Թերզեանի վրայ դնելով ազատական յոյսեր, ակնկալութիւններ։

Եւ որպէս զի հակակրական խմորում մը կարենայ ստեղծել հայ-կաթոլիկ ժողովականներու մէջ, իր վարչական ժողովներու մէջ սկսած է արծարծել հարցեր այնպիսի ըմբռնումով, որոնք երևութապէս պատերով, իրաւունքի պիտի հասարակին։ Իսկ խորը քննելով, դիտուած կը հասկացուի, որ բոլորովին անիրական են։ Օրինակ՝ ըսած է թէ հայոց պատրիարքարանը կառավարութենէ ստացած 10,000 ոսկի գումարէն, որ յատկացուած պիտի ըլլայ Կիլիկիոյ կաթոլիկներուն, բաժին հասած չէ հայ-կաթոլիկ պատրիարքարանի։ Ասոնց զրկելու համար Մինչև ինքը չեմ գար պիտի որ այդ գումարը բաշխուած չէ՝ ինչպէս տարի կումներու այլ ձեռնարկուած է՝ ոչխարատոցներ բանալու ոչ անիրոր գոյ պիտի ունենան դիմելի, բողոքական և բարեաւորական՝ կարօտ կին ու տղերիկ։ Մա մեր ազգային գումարէն յատկացուած է որքանցներու, որոնք նոյնպէս բաց են, անխտրաբար, հայ որբերու, մինչ գաւանութեան ալ որ պատկանին։

Դիցուք այդպէս ըլլայ, ով կարգելէ, որ Թերզեան պատրիարք չբանակցի մեր պատրիարքարանի հետ և իր դիտողութիւնները չներկայացնէ։

Նոյնքան անպատեհօրէն մէջտեղ հանուած է Բանկալթիի գերեզմանոցի հարցը, Ազարեանէ մնացած սին կտակ մը, ազգին դէմ բախտութեան օրերու մէջ ձեռք առնուած։

Լաւ է. Թերևս չարիքի մէջ բարիք մըն է ազգին. իր հանուրքին մէջ Թերզեանի յարուցած զգուանքը, անտարակոյս, աւելի օգտաւոր է ընդհանրական շահու տեսակէտով։ Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՄԵԾԱԳՈՐԾ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ

«Մշակը» առաջինն եղաւ, որ յայտնեց Մոսկվայում վախճանված Աթանաս Ժամհարեանի կտակած խոշոր գումարի մասին. նա առաջինն եղաւ, որ ողջունեց կտակողի բարի և լուսամիտ ցանկութիւնը և առաջինն եղաւ, որ աւետեց, թէ հանգուցեալի եղբայրները որոշել են աւելի լայն կերպով յաւերժացնել իրանց եղբօր յիշատակը։ Այսօր ուրախ ենք աւետելու հայ հասարակութեան, որ Ժամհարեան եղբայրները, արդարև, սկսում են մի մեծագործ և խոշոր կուլտուրական ձեռնարկութիւն, որի օգուտը և բարիքը պէտք է վայելի մեր երկրի գիւղական ազգաբնակութիւնը և որը պէտք է յաւերժացնէ Ժամհարեանների անունը հայ ժողովրդի կուլտուրական պատմութեան մէջ։

Ինչպէս ընթերցողները կը տեսնեն ստորև տպված համակից, ուղղված «Մշակի» խմբագիր Ալէքսանդր Քալանթարին, Ժամհարեան եղբայրները որոշել են հիմնել Գիւղատնտեսական Ինստիտուտ մեր երկրում (հաւանօրէն Ղարաբաղում) և այդ նպատակի իրագործման համար, բացի արդէն կտակված 250,000 ր. գումարից, նրանք ոչ միայն յանձն են առնում ինստիտուտի շինութեան և անհրաժեշտ ուսումնական պարագաների ծախքերն անելու, այլ և պատրաստ են նուիրել իրանց մի մեծ կալուածը, 4000 դեսեատին հող «Թալիշ» անունով, և Շուշու մեծ տունը։

Պետերբուրգ, 31 դեկտեմբեր
Մեծարգոյ Ալէքսանդր Քալանթար

Ձեր խմբագրութեամբ հրատարակվող յարգելի «Մշակ» լրագրից մեզ համար մխիթարական էր տեղեկանալ, որ մեր հանգուցեալ Աթանաս եղբօր կամքը հիմնելու Կովկասում Գիւղատնտեսական Ինստիտուտ և այդ նպատակի համար նրա 250,000 ր. կտակելը գտել է ձեր կողմից լուսաւոր համակրութիւն և հաւանութիւն։

Ուշադրութեան առնելով միևնոյն ժամանակ ձեր երկարամեայ գործունէութիւնը հասարակական շահերի ասպարէզում և ձեր խորին ծանօթութիւնը կովկասեան ազգաբնակութեան կարիքների հետ, մենք եկանք այն եզրակացութեան, որ դուք կարող էիք խորհուրդներով և ցուցումներով անփոխարինելի օգուտ բերել գործին, որին արձագանք տուիք այնպիսի համակրութեամբ։

Ուստի մենք թոյլ ենք տալիս մեզ դիմել ձեզ խնդիրքով՝ ստանձնել ներգործական մասնակցութիւն Կովկասում Գիւղատնտեսական Ինստիտուտ հիմնելու խնդրում։

Ձեզ համար, ի հարկէ, պարզ է, որ հասարակական գործունէության աջողութիւնը կախված է նրա զգուշաւոր և շրջանկատ իրագործութիւնից, ուստի դուք կը համաձայնէք, որ նախ և առաջ անհրաժեշտ է գրաւել մի քանի ձեռնհաս և տեղեակ անձեր, կազմակերպել յանձնաժողով և մանրամասնօրէն քննել հետևեալ խնդիրները՝ որտեղ իսկապէս ամենանպատակայարմար բազմոցը կը լինէր հիմնել Ինստիտուտը, ինչ տիպի պէտք է լինի այդ դպրոցը, ինչ պրօգրամ ցանկալի է դնել նրա զբաղմունքների հիմքում. քննել ուսումնական կազմի խնդիրը, ուրուագծել իրաւունքներ և կոչում, որը պէտք է տայ Ինստիտուտը իր սաներին դասընթացքը աւարտելու ժամանակ և առնասարակ մշակել լիակատար կանոնադրութիւն՝ ներկայացնելու նրան ի հաստատութիւն կոռավարութեան։

Բացի այդ անհրաժեշտ է մշակել ցանկալի յատակագիծներ և ուրուագծել նախնական նախահաշիւներ շինութիւնների կառուցման և անհրաժեշտ ուսումնական պարագաների ծախքերն անելու, ապահովելու համար։ Ընդ ամին խնդրում ենք աչքի առաջ ունենալ, որ մենք պատրաստ ենք ընակարանների շինութեան, նրանց կահաւորման և անհրաժեշտ ուսումնական պարագաների պատրաստութեան ծախքերը վերցնել, որ մեր նամակով նշված կտակած 250,000 ր. մնայ ըստ հնարաւորութեան անձեռնմխելի գրամագլուխ։

Ուրուագծած նպատակների հետ կից կարևոր ենք համարում ձեր նկատողութեան և յանձնաժողովի տեղեկութեան համար յայտնել, որ մեզ պատկանող «Թալիշ» կալուածքը 4000 դեսեատին, որ գտնվում է Գանձակի և Շուշու միջև և նոյնպէս մի ընդարձակ տուն Շուշի քաղաքում, մենք պատրաստ ենք, բացի կտակված 250,000 ր. գումարից տալ ի լիակատար սեփականութիւն հիմնվելիք Ինստիտուտի, եթէ միայն յանձնաժողովը ցանկալի գտնի յարմարեցնել այդ կալուածքը դպրոցի անմիջական նպատակների համար։

Սպասելով ձեր սիրալիր և համակիր համաձայնութեան մնանք լի յարգանքով՝

Եղբարք Ժամհարեաններ

Ցունվարի 6-ին, Ժամհարեան եղբայրներին ուղարկվեց հետևեալ հեռագիրը.

«Ստացայ ձեր գրութիւնը։ Խորապէս հարգելով եմ ձեր դիտաւորութիւններին։ Հաճութեամբ կընդունեմ կազմակերպել յանձնաժողով. լիայոյս եմ խնդրի նպատակայարմար մշակութեան մասին։

Մանրամասնութիւնները նամակով։

Անկասկած, լայնարձակ բեղմնաւոր կը լինի այդ բարձր կուլտուրական գործը։

Քալանթար

ԵՐԿԱԹԷ ՄԱՐԴԸ

Թէև մի քիչ ուշ, թէև գուցէ այժմ անյարմար նկատվի իմ ուշացած խօսքը, բայց թող ներվի ինձ ևս մի քանի խօսք ասել հանգուցեալ Կաթողիկոսի մասին։

95—96 թ. ամենախոշոր և փայլուն դէմքը, 19-րդ դարի ամենամեծ հուժկու հասարակական հայ գործիչը անհետացաւ ասպարէզից անդառնալիօրէն։

Այն մարդը, որի անաւոր ձայնից թնդաց Եըլդըզ-Քիոշքը, որի լոկ տեսիլը սոսկումներ էր տարածում Եըլդըզի ճիւաղի, Մեծ Մարդասպանի վրա, այժմ, չքացաւ մեր միջից, զոհ գնալով ստորաքարշ թզուկների, հասարակական գործը մենավաճառ դարձրած «գործիչների» դաւերի շնորհիւ։

Իզմիրլեանի մաքուր հոգին չը կարողացաւ դիմանալ մեր այլասերված կեանքի ապականված մթնոլորտին։

Եւ խեղդամահ եղաւ Մեծ Աքսորականը...

Թէ ինչպէս էր նա իբրև լոկ կրօնաւոր, իբրև եկեղեցական, այդ մեզ համար ոչ մի հետաքրքրութիւն չունի,—թէև, անշուշտ, իբրև կաթողիկոս, իր նմանը չէր ունենալու,—բայց Իզմիրլեան Պատրիարք, Իզմիրլեան Արդիւլ-Համիդի հուժկու ապտակահարող, Իզմիրլեանն տաճկահայ ազատագրութեան՝ մասնաւորապէս, և ընդհանրապէս Թիւրքիայի ազատագրութեան այդ հզօր կարապետը և ռահվիրան, անմահ կը մնայ ամէն մի հայի, մանաւանդ, ամէն մի թիւրքիացու սրտում, առանց դիրքի և դասակարգի խտրութեան։

Հայոց ազգի «մեծերը» իրանցն ասացին, հայոց ազգի ամէն տեսակ «երդուեալ-դարձիչները» իրանց «հզօր ձայնը» բարձրացրին, թոյլ տրուի մեզ ևս, իբրև մի հասարակ մահկանացուի, երկու խօսք ասել մեզ, որ ոգևորվել և հիացել ենք այդ Մեծ Մարդու ընդվզումով, նրա ըմբոստ գործունէութեամբ՝ յօդուտ թիւրքահայ ճնշված և հալածված ժողովրդի, երկու բառ ասել և դառնագին կերպով ողբալ նրա կորուստը...

Բագու Սիմ. Հովուեան

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

Ազգագրական Ընկերութեան վերջին նիստը հետաքրքրական էր և գրաւել էր աւելի քան 40 հոգի անդամներից և հիւրերից։

Նիստը տեղի ունեցաւ Ա. Քալանթարի նախագահութեամբ։

Նախ քան նիստի պարապմունքներին դիմելը, նախագահի առաջարկութեամբ ժողովականները ոտքի կանգնելով յարգեցին Ընկերութեան հովանաւոր Մատթէոս Իզմիրլեան Կաթողիկոսի յիշատակը։

Այնուհետև Ե. Լալայեան կարդաց մի բովանդակալից զեկուցում իր արած ճանապարհորդութեան մասին Վանի և Աղթամարի շրջակայքում։ Զեկուցանողը ցոյց տուեց մի շարք լուսանկարներ, որոնք նպաստում էին նկարագրութիւնների իւրացման։ Զեկուցման մեծագոյն մասը կը հրատարակվի «Ազգագրական Հանդէսի» նոր հատորում։ Լալայեանը նկարագրել է ժողովրդի ազգագրական գծերը, բնակարանները, զգեստները, սովորութիւնները, հաւատալիքները, բանաւոր գրականութիւնը և աչքի է անցրել զանազան տեղերում գտնվող ձեռագիրները։

Ժողովը ծափահարութեամբ ընդունեց զեկուցումը և ցանկալի համարեց շարունակած տեսնել Թիւրքահայաստանի ազգագրական ուսումնասիրութիւնները սկսված եռանակով և հրաւիրել Կ. Պոլսի Ազգային Ժողովի ուշադրութիւնը կազմակերպելու, ուսումնասիրելու Թիւրքահայաստանը ընդարձակ ծրագրով, որի մէջ մտնեին թէ ազգագրական և թէ մնասական կետերը։

Վ.-Ն.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Կիրակի, յունվարի 2-ին տեղի ունեցաւ Ժողովրդական Համալսարանի ընկերութեան հայկական սեկցիայի ժողովը Հ. Առաքելեանի Նախագահութեամբ։

Այս ժողովը կայանալու էր դեռ անցեալ տարվայ վերջերին, բայց Պատրիարքի մահը պատճառ դարձաւ նրա յետաձգման։

Ներկայ էին 12 անդամներ։

Նախագահը առաջարկեց հանգուցեալ Վահարատի յիշատակը յարգել ոտքի կանգնելով, որ և կատարվեց։ Ներկայ գտնվողների կողմից։

Ապա նախագահը յայտնում է, որ Հայկական Սեկցիան պէտք է որոշէ իր գործունէութեան ծրագիրը։

Հայկական Սեկցիան, Առաքելեանի կարծիքով, կարող է կազմել մի շարք զուտ գիտական դասախօսութիւնների ցանկ, որոնց համար կարելի կը լինի թոյլտուութիւն ստանալ։

Մտքերի թեթև փոխանակութիւնից յետոյ, ժողովականները յանձնարարեցին վարչութեան մշակել վերոյիշեալ դասախօսութիւնների ծրագիրը, բանակցութիւն վարել զանազան անձանց հետ, ստանալով նրանց համաձայնութիւնը դասախօսութիւններ կարդալու համար և այդ բոլորը կատարելուց յետոյ դիմել ուր հարկն է թոյլտուութիւն առնելու։ Վարչութիւնը իր արածի մասին իրազեկ կանէ եկող ժողովին։

Այնուհետև Բ. Մկրտումեան զեկուցանում է սեկցիայի անունով բացված կիրակնօրեայ դպրոցի մասին, որ գտնվում է Հալաբարի Էջմիածնեցոց ծխական դպրոցի շինութեան մէջ։ Այդ դպրոցում կիրակի օրերը բանուորները սովորում են գրագիտութիւն ուսուցիչ Գարդիշեանից։ Այն հարցին թէ միթէ աւելի նպատակայարմար չէ լինի, որ այդ տեսակ դպրոցները գիշերային լինեն, Մկրտումեան բացատրում է, որ բանուորները հնարաւորութիւն չունեն յաճախելու երեկոները, հէնց այդ իսկ պատճառով Ժողովրդական Համալսարանի Կենտրոնական Վարչութիւնը որոշել է փակել իր գրագիտական ուսումնարանները։ Հայկական Սեկցիան այժմ պէտք է հսկէ դպրոցի վրա, աշխատել վարձել երկրորդ ուսուցիչ, ձեռք բերել դասագրքեր և այլն։

Որոշվեց խնդրել Ա. Նազարէթեանին և Ս. Եսայեանին գնալ դպրոցը և ծանօթանալ դասատուութեան հետ ու հաղորդել հետևեալ անգամ սեկցիայի ժողովին։

Յայտարարվեց, որ Սեկցիայի կողմից Կենտրոնական Վարչութեան մէջ ներկայացուցիչ ընտրված Ռ. Խանազատեան տկարութեան պատճառով հրաժարվում է իր պարտաւորութիւններից։

Նկատի առնելով այդ, ժողովը կենտ. Վարչութեան մէջ Սեկցիայի ներկայացուցիչ է ընտրում Յաս. Գասպարեանին։

Ապա ժողովին զեկուցվեց, որ անցեալից մնացած 470 ռուբլին պահվում է Սեկցիայի անունով Քրիզօսեանի դրամատանը, առաջարկվում է ամէն կերպ աշխատել որպէսզի գումարը մնայ Սեկցիայի սեփականութիւն՝ հերթական անհրաժեշտ պէտքերի համար։

Վարչութիւնից խնդրվեց նաև ձեռք բերել հին Սեկցիայի օրերում ունեցած ինվենտարը։ Ե.

ՐԱՖՖՈՒ ՀԵՐՈՍԻ ՄԱՀԸ

Վաղարշապատ, 4 յունվարի

Այսօր բաւականին մեծ շուքով և երկսեռ բազմութեան ներկայութեամբ հողին յանձնվեց Սամսոն Տէր-Պողոսեանի (Խենթ) մարմինը։ Սամսոն Տէր-Պողոսեանը այն գիսաւոր աստղերից էր որոնք հազուագիւտ երևում են երկնակամարի վրա և մի որոշ շրջան անելուց յետոյ չքանում են, թողնելով իրանց ետևից պայծառ գիծ։

Մեզնից որ հայը չէ կարդացել «Խենթի» պատմութիւնը և ծանօթ չէ 1877 թ.ի ռուս-թիւրքական պատերազմի հայ հերոսին, որը այնպիսի մի վտանգաւոր քայլ ընտրեց և հերոսաբար տարաւ այդ քայլը ու հարիւրաւոր մարդկանց նորից կեանք ու հոգի տուեց։

Ով չէ յիշում այդ տարվայ պատերազմը և Բայազէտի բերդի պաշարումը և քաղցի ու սովի առաջ տառապող ժողովրդի ու ռուսաց զօրքի տանջանքը։ Դրանց ազատող հերոսն էր այսօրվայ հանգուցեալը, որի մարմինը այսօր ս. Գայեանէի բակում զինուորական պատիւներով յանձնվեց հողին։ Եկեղեցում հոգեհանգստի կարգը կատարելուց առաջ խօսեց բարձրապատիւ Բենիկ վարդապետը որը գեղեցիկ կերպով բնորոշեց Սամսոնի տիպը և նկարագրեց գեղեցիկ բառերով ու դարձուածքներով, թէ ով էր նա, որտեղ էր ուսումն առել և թէ ինչպէս Արագածի և Արայի լեռան ազատ լանջերի առողջարար օդի ու Հրազդան գետի սառած ափերի հողից սնված ու մեծացած հերոսը բարձրացրեց հայ երիտասարդութեան անունը և ցոյց տուեց, որ դեռ նրանց մէջ հերոսներ լինում են։ Դագաղի վրա դրված էին 7 պսակ։

1) Վաղարշապատի հասարակութիւնից 1877 թ.ի մեծ հերոսին, մակագրութիւնով։

2) Վաղարշապատի երիտասարդութիւնից—իր անմոռանալի հերոս «Խենթին»։

Մնացած 5-ը հանգուցեալի բարեկամներից և յարգողներից էր։

Այս այսպէս հողին յանձնվեց Բայազետի հերոսի մարմինը։ Հանգուցեալը մօտաւորապէս կը լիներ 65 տարեկան և մեռաւ կաթուածից։ Վ. Ք. Աղաբաբեան

Գ. Ա. ՏԱՐԱՍԵԱՆ

Այս օրերս Մոսկվայում վախճանվեց յայտնի վաճառական և հայ հասարակական գործիչ, եղբ. Տարասեանների մանուֆակտուրային ընկերութեան վերատեսուչ Գաբրիել Աֆանասեան Տարասեանը։

Հոր մահից յետոյ, որ համարվում է «Եղբ. Տարասեանների» առևտրական տան հիմնադիրը, Գ. Ա.-ն կանգնեց գլուխի գլուխ և միանգամից ընդարձակեց նրան. բացի Մոսկվայից, նա բաժանմունքներ և ֆաբրիկաներ ունի Արմաւիրում, Եկատերինոդարում, Սիմֆերօպոլում, Աստրախանում և Ռոստով Դ/վրա։ Արմաւիրի գաւառում նա ձեռք բերեց անագին կալուածք։

Գ. Ա. մեծ ժողովրդականութիւն էր վայելում Կովկասում և Մոսկվայում առևտրաարդիւնաբերական աշխարհում և աչքի էր ընկնում բարեսրտութեամբ ու մարդասէր հոգով և միշտ արձագանք էր տալիս ամեն բարի գործին։

Վախճանվեց Գ. Ա. 63 տարեկան հասակում ստամոքսի քաղցկեղից։

ՁԵՄԱՐԱՆԻ ԵՒ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՁԺՄԵԱՆ ՎԻՃԱԿԸ ԱՐԺԱՆԻ Է ՄԵՐ ԱՄԵՆԱԼՈՒՐՋ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը դեկտեմբերի 31-ի նիստում որոշեց ի յիշատակ հանգուցեալ Վեհափառի մի սան պահել Էջմիածնի ճեմարանում։

Դրանով ընկերութիւնը յարգում է մի մեծ յիշատակ և միևնոյն ժամանակ տալիս է իր լուման ճեմարանի ապահովման գործին։

Հանգուցեալ երջանկայիշատակ Գէորգ կաթողիկոսի օրից մինչև այսօր ճեմարանը սպասում է իր Մեսսիային, որ նրան փրկէր, ապահովէր։

Մենք միշտ սպասել ենք և սպասել ենք ապարդիւն, որ կը գայ նոր կաթողիկոսը և կապահովացնէ ճեմարանը։

Մենք հաւատում ենք մեր հայրապետների հեղինակութեան և սպասում ենք։

Նոր կաթողիկոսը գալիս է, ոչինչ համարեա չէ փոխվում և ճեմարանը միևնոյն անհանձնելի նիւթական անկման մէջ է մինչև օրս։

Ճեմարանը կարող չէ կախված մնալ նիւթական կողմից պատահական պարագաներից։

Ճեմարանը ինչպէս և միւս մեր հոգևոր դպրոցները պիտի ապահովված լինեն, և մեր կարծիքով դեռ Կաթողիկոսը չընտրած, պէտք է մեզ հոգալ այդ մասին։ Մեզանում իսկապէս սխալ կարծիք է բոլոր բանը կաթողիկոսից սպասել և նրա ուսերի վրա դնել մի ծանր ու դժուար բեռ։ Փորձենք բոլորս օգնելու։ Փորձենք այդ բեռին մօտենալու։ Քանի որ կաթողիկոսը ընտրված չէ և մայր աթոռը թափուր է, մնում է ազգին, որ ապրում է, որի մասին պէտք է մտածել և ինչքան շատ, այնքան լաւ... Երբ էջմիածնի տնտեսական դրութիւնը կը պարզվի ժամանակին, ի հարկէ ճեմարանը ապահովված կը լինի նրա եկամուտներով, բայց առայժմ պէտք է գտնել ժամանակաւորապէս օգնել։ Թող մեր ընկերութիւնները և հարուստները սաներ պահեն ճեմարանում։ Տարեկան 250 ռուբլի տալը դժուար չէ և երևի ցանկացողներ կը լինեն։

Ցանկացողներ կը լինեն անշուշտ...

Բայց... ազգը իրաւունք ունի ապասելու և պահանջելու, որ ճեմարանը և մեր հոգևոր դպրոցները ճեմարան և հոգևոր դպրոցներ մնան, կամ... փակվեն։

Մեր հոգևոր դպրոցները, թէ ճեմարանը, թէ թեմականները հիւանդ են և հիւանդ են կրկնակի։ Մէկ կողմից նիւթական անապահովութիւն, միւս կողմից մէկ տեսակ բարոյական աղքատութիւն...

Ասում են՝ աշակերտները չեն ուզում յաճախել եկեղեցի, երգել պատարագի։ Ժամանակ, անգամ չեն ուզում սովորել կրօն և բոլորի ձգտումն է՝ մտնել համալսարան...

Այդ ցանկութիւնները գուցէ իրաւացի լինէին, եթէ միայն մեր ճեմարանի և դպրոցների աշակերտների ցանկութիւնները չը լինէին...

Ով չէ ցանկանում պատրաստվել հոգևորականի կոչման, ով ճեմարանի և դպրոցների վրա նայում է իբրև մի գիմնազիայի, բէալական դպրոցի վրա, նրան կարիք չը կայ մտնել ճեմարան, մտնել թեմական դպրոց...

Ճեմարանը և հոգևոր դպրոցները ճեմարան և հոգևոր դպրոցներ պիտի մնան կամ պիտի փակվեն, որովհետև հոգևորականը պիտի գոտնայ կրօն, ընդունէ անպայման եկեղեցին, իսկ մեր ճեմարանը և մեր դպրոցները պիտի լուսաւորված հոգևորականներ պատրաստեն։

Եթէ ոչ, եթէ ճեմարանը և թեմ. դպրոցները գիմնազիաներ են համալսարան մտնելու, բժիշկ և փաստաբան մեզ տալու համար, ազգը կարիք չունի բնաւ իր լուման տալու պահպանելու համար հոգևոր դպրոցներ, ոչ մի առնչութիւն մեր հոգևոր գործերի հետ չունեցող...

Մենք կանգ չենք առնում այն տխուր անցքերի վրա, որ տեղի ունեցան ճեմարանում և մեր ուրիշ դպրոցներում. դրանք ժամանակի, յայտնի հոսանքի ազդեցութիւնը, հետևանքներն էին... Անցան, գնացին, ինչպէս ալիքները ծովի, ինչպէս փրփուրները, կեղտոտ փրփուրները այդ ալիքների...

Մենք բոլոր պարտական ենք ապահովացնել թէ ճեմարանի, թէ դպրոցների վիճակը, բայց մենք իրաւունք ունենք պահանջելու, որ ճեմարանը ճեմարան մնայ և հոգևոր դպրոցները—հոգևոր դպրոցներ։

Ով ուզում է մտնել գիմնազիօն, մտնի գիմնազիօն, և ով գերադասում է բէալական դպրոցը՝ բէալական դպրոց. բայց մենք, որ մեր լումաներով շինում ենք, ապահովացնում ենք մի հոգևոր հաստատութիւն լուսաւոր հոգևորականներ ունենալու համար, մենք չենք կարող թոյլ տալ, որ այդպիսի հաստատութեան մէջ մեր կրօնը, եկեղեցին արհամարհվեն։

Չը կայ կրօն առանց հաւատի և չէ կարող լինել հոգևոր դպրոց առանց կրօնի։

Մեր ազատամիտներին, որ չեն ընդունում կրօն, հաւատ, եկեղեցի, անգամ ազգ, ոչինչ չունենք ասելու։ Նրանց մասին չէ մեր խօսքը և ոչ անգամ ընդդէմ։

Մենք կարծում ենք միայն, որ այդ ազատամիտները ոչինչ չունեն սպասելու մեր հոգևոր դպրոցներից։ Նրանց տեղը հոգևոր դպրոցներից դուրս է։ Թող իրանց դպրոցները իրանց ծրագիրներով բանան։

Այո, ճեմարանի և մեր թեմական դպրոցների այժմեան վիճակը արժանի է մեր ամենալուրջ ուշադրութեան։

Մտածենք, հոգանք օր առաջ։

Գ. Զալիսուշեան

ԲԺԻՇԿ ԵՓՐԵՄ ԱՂԱՄԱԼԵԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Սկսվում է դատավարութիւնը. նախագահը, դիմելով մեղադրեալ Արշակ Մարտիրոսեանին,—հարցնում է. «Համարձակ էք ձեզ յանցաւոր բժ. Եփրեմ Աղամալեանին սպանելու մէջ կողոպտման նպատակով»։

Մարտիրոսեան կմկմալով և վերջը նախագահի շեշտակի պահանջին պատասխանում է. «Այո, սպանութեան մէջ, բայց ոչ կողոպտման նպատակով...»։

Թամարա Մարտիրոսեանը միևնոյն հարցին հազիւ լսելի ձայնով ներքև նայելով ասում է՝ «համարում եմ»։

Նախագահը հրամայում է դուրս տանել Արշակին, և Թամարային առաջարկում է մօտենալ դատական սեղանին։ Յետոյ նա դիմում է Թամարային. «Բանի որ դուք ձեզ յանցաւոր ընդունեցիք, ուրեմն պարզեցէք, թէ ինչպէս բոլորը կատարվեց. խօսեցէք մի փոքր բարձր, որպէսզի ձեզ բոլորը կարողանան լսել»։

Թամարան գլուխը իջեցրած լռում է։ Տաս րոպէ ընդմիջումից յետոյ նախագահը նախազգուշացնում է նրան, որ նա՝ Թամարան կարող է և չը պատասխանել այդ հարցին, դա նրա իրաւունքն է։

Պաշտպան Կանչելին խնդրում է հարցեր տալ մեղադրեալուհուն և այդ կերպ նրանից խոստովանութիւն լսել, սակայն նախագահը այդ վաղաժամ է գտնում։

Թամարա Մարտիրոսեանը դարձեալ ինչ որ քչփչում է Կանչելին, որը յայտնում է թէ Թամարան չը գիտէ ինչից սկսէ։

Նախագահը.—«Ասացէք, ինչպէս կազմվեցավ յանցագործութիւնը, ով կատարեց»։

Թամարան հազիւ լսելի ձայնով սկսում է. «Մտածեց ամուսինս... Ես վախենում էի... Երբ նա կրակեց Աղամալեանի վրա, այն ժամանակ ես հեռացայ միւս սենեակը»...

Նախագահը.—«Ձեր ամուսինը մտածեց, ասաց ձեզ և դուք համաձայնեցիք, բայց ինչ բանի համար»։

Թամարա.—«Նրա համար, ինչ որ նա ուզում էր կատարել»։

Նախագահը.—«Բայց ինչ բանի համար իսկապէս»։

Թամարա.—«Ամուսինս ասում էր, որ նրա և բժշկի մէջև ինչ որ թիւրիմացութիւն կայ»։

Նախագահը.—«Երբ բժիշկ Աղամալեանը հեռացաւ ձեր մօտից, դուք չը հարցրիք ձեր ամուսնուն՝ այդ բժշկին էր ուզում նա սպանել։ Նշանակում է, դուք գիտէիք»։

Թամարան.—«Ո՛չ, նա ասաց, որ «թիւրիմացութիւն կայ...»։

Նախագահը.—«Բայց ժամացոյցից, շղթայից, թաշկինակից, պէնսնէից, ոչինչ չը վերցրիք»։

Թամարան.—«Ժամացոյցը, քսակը»...

Նախագահը.—«Ինչքան փող կար քսակի մէջ. դուք համարեցիք»։

Թամարան.—«Ոչ։ Ամուսինս վերցրեց»։

Նախագահի յետագայ հարցերին Թամարան պատասխանում է, որ բնակարանը սպանութիւնից յետոյ փակեց նրա ամուսինը և որ սպանութեան ժամանակ կողմնակի անձն ներկայ չէր։

Երդ.-հաւ. Բարատովը հարց է տալիս Թամարային.—«Ասել էք դուք քննութեան ժամանակ, որ ձեր ամուսինը բժշկին սպանեց խանդից և ինչու համար»։

Թամարան.—«Ասել եմ ամուսնուս սովորեցնելով»։

Նախագահ.—«Որտեղ նա ձեզ սովորեցրեց այդպէս ասել»։

Թամարան.—«Թէլէթում»։

Բարատով.—«Այդ միտքն առաջին անգամ ձեր մէջ յղացաւ, թէ ամուսնուց իւրացրիք»։

Թամարան.—«Ամուսնուցս սովորեցի»։

Նախագահի կարգադրութեամբ ներս են բերում Արշակ Մարտիրոսեանին, որ նախագահի պահանջով պատմում է հետևեալը.

Նա սկսում է այնտեղից՝ թէ ինչպէս նա ամուսնացաւ Թամարայի հետ, որի համար նրա ծնողները իբրև օժիտ խոստացան տալ 3000 ր.։ Յետոյ Մարտիրոսեանը բաւական մանրամասն, յաճախ բուն լինդրից շեղվելով, պատմում է, թէ ինչպէս նա փոխանակ 3000 բուբլու, ստացաւ միայն մի հազար ր., նա կնոջ հետ գնաց Մոսկվա և ապրում էր այնտեղ։ Պատմում է, որ նա խօսք էր դուրս քաշում կնոջից՝ թէ ով զրկեց նրան կուսութիւնից, այդ մարդը չէ՞ հետևել պրկեօք նրան, Թամարային, չէ՞ սիրում արդեօք Թամարան նրան, չամուսնացաւ արդեօք նա իր հետ ծնողների յորդորմամբ։

Վերջապէս նրան աջողվեց իմանալ կնոջից, որ նրա կուսութիւնը խախտել է Թիֆլիսի կադէտների կօրպուսի 7-րդ գասատան կադէտ Միքէլաձէն Սուքամում։ Կնոջ այդ խոստովանութիւնը այն ատեճան ազդեց մեղադրեալի վրա, որ նա խմեց կէս շիշ գինի և բողոքվին հարբեց։

Այնուհետև Մարտիրոսեանը ի չարը գործ դնելով գասատանի համբերութիւնը, պատմում է զանազան մանրամասնութիւններ իրանց կեանքից և ի միջի այլոց հերքում է մայրաքաղաքի լրագիրների այն տեղեկութիւնը, իբր նա Մոսկվայում իր կնոջը վաճառքի առարկայ էր դարձրել։

Ապա նա պատմում է, որ կինը Թիֆլիսում հիւանդանում է կանայի հիւանդութեամբ Մոսկվայից վերադառնալուց յետոյ և նրան բժշկելիս են լինում երեք բժիշկներ. այստեղ նրա կնոջ գայթակղեցնողը՝ կադէտ Միքէլաձէն, որ յետոյ դառնում է արտիլերիայի պօրուչիկ, դառնում է բժիշկ Աղամալեան, որ իբր զրկել էր նրա կնոջ կուսութիւնը այն ժամանակ, երբ կինը բժշկվելիս է լինում նրա մօտ։ Այդ նա իմացաւ ընկերներից և իր ծնողներից, բայց կինը չէր խոստովանում նրան և միայն խրամանկութեամբ մեղադրեալն ամեն ինչ իմանում է։

Խօսելիս Մարտիրոսեանը միշտ գործ է ածում «մենք»։

Եւ երբ նախագահը հարց է տալիս թէ ովքեր են այդ «մենք»-ը, Մարտիրոսեանը պատասխանում է՝ «սպանութիւնը կատարեցի ես, նա (Թամարան) ձեռք չը տուեց բժշկին»։

Պատմութեան շարունակութեան մէջ մեղադրեալը բացատրում է, որ նա կնոջ հետ պայման էր կապել, որ եթէ կինը խմէր սեղանի վրա դրված սուրճը և ոչ շուրը, կը նշանակէր նա պէտք է սպանէր բժ. Աղամալեանին, որը իբր չէ կամենում հանգիստ թողնել նրա կնոջը Թամարային և կամենում է հետևել նրան։

Երբ եկաւ բժ. Աղամալեանը, մեղադրեալը նրան մենակ թողեց իր կնոջ հետ մի սենեակում, իսկ ինքը այդ պահին միւս սենեակումն էր. նրանց միջև 15 րոպէ շրջանակ կրկոտ բաժանութիւն եղաւ։ «Ես մտայ,—պատմում է Մարտիրոսեանը,—կինս խմեց սուրճը։ Ես կատաղեցի և կրակեցի մօնտեկրիստոյից... Մարմինը կորտեցի ոչ թէ ես, այլ ուրիշը... Տէր-Աբրահամեանը... Կրակելուց յետոյ հարևան սենեակից մտաւ Տէր-Աբրահամեանը և հարուածեց Աղամալեանին... Ես ձախ ձեռքով բռնեցի Աղամալեանին, որ վայր չընկնի և նա հարուածեց մի քանի անգամ և այդ րոպէին վիրաւորեց իմ ձախ ձեռքը... ես ուշաթափվեցի... գլուխը կորեց ուրիշը, և ոչ ես... ես վայր ընկայ, այսինքն նստեցի և սկսեցի լալ... Կինս հանդարտացնում էր... Պայմանաւորված էր փախչել... Ծանօթ կառապան պատահեց, գնացինք Թէլէթ... Այնտեղ լաց էի լինում, զղջացի, ինչպէս ոչ մի յանցաւոր չէ զղջացել... Մատաղ արի, աղքատներին փող բաժանեցի։ Ժամացոյցը, շղթան և պէնսնէն վերցրեց կինս, բայց ոչ կողոպտման նպատակով, այլ կասկածը վանելու համար...

Վերջում մեղադրեալը կրկին ապացուցանում է, որ սպանութիւնը կատարվել է խանդից և ոչ կողոպտելու դիտաւորութեամբ։

Մարտիրոսեանի բացատրութիւններից յետոյ՝ յայտարարվում է տաս րոպէ ընդմիջում։

Ընդմիջումից յետոյ հարցաքննվում են վկաները։ Ի թիւս միւսների բժ. Յակոբեանը և Գօրու գաս. հարկատու տեսուչ Լ. Ղօրղանով իրանց ցուցմունքների մէջ նկարագրում են հանդուցեալ բժ. Աղամալեանին իբրև բարոյական մարդ, որ ընդունակ չէր դաւաճանել կնոջը։

Այս տեղի են ունենում կողմերի պաշտպանների ճառերը։

Վերջում դատարանը ատենակալով կայացնում է իր դատավճիռը, որ արդէն յայտնի է «Մշակի» ընթերցողներին։

Յ. Գ.—Կովկասի Փոխարքան հնարաւոր դատաս Թամարա Մարտիրոսեանին որոշած 20 տարի տաժանակիր աշխատանքները դարձնել երկու տարով բանտարկութիւն՝ հաշուած նաև նախնական բանտարկութիւնը 6 ամիս։

Այնպէս որ Թամարա Մարտիրոսեանը 1 տարի ու 6 ամիս բանտարկութիւնից յետոյ դարձեալ ազատ ապրելու է հասարակութեան մէջ։

Արշակ Մարտիրոսեանի վերաբերութեամբ դատարանի վճիռն արդէն գործադրվեց։ Նրան կախեցին ամսիս 7-ին, առաւօտեան ժամը 5½-ին։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՐԷՖԵԼԷՎԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դեկտեմբերի 27-ին, ցերեկվայ ժամը 1-ին, կայացաւ Կովկասեան Փրեբելէվեան Ընկերութեան հիմնադիրների և համակրողների ընդհանուր ժողովը, որի նպատակն է՝ ընդարձակ կերպով տարածել Կովկասում դպրոցից դուրս ուսումն մացնելու գաղափարը։

Յիշեալ համակրելի ընկերութեան հաստատման նախաձեռնութիւնը պատկանում է Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Բուգրօվին։

Ընդհանուր ժողովը միաձայն նախագահ ընտրեց նախաձեռնողին։

Ողջոյնի ճառի մէջ Ն. Ֆ. Բուգրօվը խօսեց, թէ առհասարակ ինչ մեծ նշանակութիւն ունի դպրոցից դուրս կրթութիւն տարածելը, մանաւորապէս ինչպիսի կարևոր նշանակութիւն կարող է նա ունենալ մեզ մօտ Կովկասում։

Յետոյ կարդացվեց հաստատված կանոնադրութիւնը և կատարվեցին ընտրութիւններ։ Ընտրվեցին նախագահ՝ Ն. Ֆ. Բուգրօվի, նախագահի օգնական՝ Ա. Մ. Զաղուրովիչ, գանձապահ՝ Դրբօգլաւ, քարտուղար՝ Լիտվինով։ Վարչութեան անդամներ՝ Ս. Վ. Արզումեան-Երևանցաղուկ, Կատ. Լիսիցեան,

Ընտրութիւններից յետոյ միաձայն ընկերութեան պատուաւոր անդամներ ընտրվեցին կոմս և կոմսուհի Վորոնցով, Դաշկովները Վրաստանի էկզարխը, Ն. Բուգրօվը։ Բոգոսավլէնսկի, Սլօվինսկի և Ֆէօդօրովսկի։

Վարչութեան առաջին նիստը տեղի է ունենալու յունվարի 8-ին։

ՌՈՒՍ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Ֆինանսական մինիստրութեան պաշտօնական օրգան „Вѣст. Финансовъ“ № 50-ի «Գաղթականութիւնը Անդրկովկասում» յօդուածի մէջ տալիս է ռուս գաղթականների մեր երկրում հաստատվելու բաւական հետաքրքրական պատկերը, որի հետ կուզենայինք ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին։

Մեր կառավարութիւնը Անդրկովկասում առ այժմ ընակեցնում է գլխաւորապէս այն ռուս գաղթականներին, որոնք մասամբ ազատվոր են Կովկասի կլիմային և անտեսութեանը։ Այդ գաղթականներին տալիս է Հիւսիսային Կովկասը, ուր կան ներքին նահանգներից եկած բաւականաչափ անհող գիւղացիներ, որոնք ներկայումս իրբև կապալառուներ, մշակում են կօշակների և մանաւոր անձանց հողերը։ Ռուս գիւղացիներին գաղթեցնելով, կառավարութիւնը մտադիր է հասցնել ռուս ազգաբնակութեան թիւը Անդրկովկասում մինչև ամբողջ ազգաբնակութեան 12—15%-ի հասցնելը, մինչև նրանց ներկայումս ռուսներ կազմում են մօտ 2%-ը։ Եթէ մինչև վերջ իրականանայ կառավարութեան մտադրութիւնը այն ժամանակ ռուս ազգաբնակութիւնը Անդրկովկասում կը հասնի մօտ 1½ միլիոն հոգի, այսինքն կը գերակշռէ շատ ընիկ տեղացիների թիւին (հայերի, վրացիների)։ Այդպիսով երկրումս կը ստեղծվեն ամուր, յուսալի կայաններ ռուսական տիրապետութեան համար այն երկրում, որ ապագայում գուցէ դառնայ թատերաբեմ բազմազան ընդհարումների։

Փոխարքայի ցուցմունքով վերջին տարիներում կատարված հողաչափական աշխատանքներով որոշվել են այն հողերը, որոնք, մինչև օրս կամ չեն մշակվել, կամ գտնվել են տեղացիների ձեռքում, իսկ այժմ նշանակված են ռուս գաղթականութիւն հաստատելու համար։ Հողային այս փօնդը հասնում է բաւական պատկառելի չափի՝ մօտ 3½ միլիոն դեսեատին, որոնցից մօտ 1½ միլիոն դեսեատին ընկնում է ձմերային արօտատեղիների (հաթաղ) վրա, որոնց թեւում Միլի և Մուղանի տափաստաններում, չօլերում մօտ 640 հազար դեսեատին։ Ենթադրում է այս տափաստանները ընակեցնել ամենից առաջ գաղթականներով, քանի որ նրանք գտնվում են Պարսկաստանի սահմանների վրա։

Ամեն մի արու շունչ գաղթական ներկայումս բաժին է ստանում 5—7 դեսեատին հող, այնպէս որ վերև յիշված 3½ միլիոն դեսեատին հողային փօնդը կը տրվի 490—690 հազար այր մարդկանց, իսկ ամբողջ գաղթականութիւնը՝ հաշուելով և կանանց սեռը կը հասնի 1—1½ միլիոն հոգու։ Մինչև 1910 թիւը արդէն պատրաստվել է գաղթեցնելու համար մօտ 54 հազար հողաբաժին, որոնցից տրվել է եկած գաղթականներին մօտ 37 հազար բաժին։ Անցած տարի կտրվել է նորից մօտ 7 հազար բաժին, շուրջ 40 հազար դեսեատինաչափ, իսկ ներկայ տարվայ ընթացքում պատրաստվելու է 8,000 հողաբաժին (55000 դեսեատին հող)։

Գաղթականութեան շրջանները ընդգրկում են ամբողջ Անդրկովկասը, Սև ծովի նահանգը, տպա Գանձակի, Երևանի, Բաքուի Թիֆլիսի նահանգները, Դագստանի, Բաթումի և Ղարսի շրջանները։ Ներկայ տարվայ ընթացքում բացվում է նոր շրջան՝ Քութայիսի նահանգի Սուխումի շրջանում։ Մինչև այժմ այդ շրջաններից ամենաշատ գաղթականներ նստել են Բաքուի Դարբասանի շրջանում, իսկ 1911 թիւին պիտի աւելի ուշք դարձնվի Պարսկաստանի սահմանագլխի վրա. այստեղ հաստատվող գաղթականութեան համար պատրաստի կայ 5600 հողաբաժին, 20 հազար դեսեատին տարածութեամբ։ Ներկայ տարվայ մէջ առհասարակ ուշադրութիւն է դարձնվում Գանձակի նահանգում գաղթականներ հաստատելու վրա, որտեղ բոլոր պատրաստի հողաբաժինները արդէն բնակեցված են. այստեղ նոր պիտի տրվեն 730 հողաբաժին, բայց ոչ սովորական 5—7 դեսեատինանոց չափով, այլ իւրաքանչիւր բաժինը 30-ական դեսեատին, որ, պաշտօնական թերթի ասելով, անտվոր հողաբաժին պիտի համարել Կովկասի համար։

Մինչև այժմս հատատված վերջին տարիների գաղթականների թիւը պիտի հաշուի 55 հազար հոգի. 1909 թիւին եկել են 12,000 գաղթականներ, նոյնքան էլ 1910 թիւին, իսկ ներկայ տարում սպասվում է 15—16 հազար հոգի։

Եւ եթէ գաղթականութեան հոսանքը չը զօրեղանայ յետագայ տարիներում, ապա 3½ միլիոն դեսեատին հողը ռուսներով բընակեցնելու համար կը պահանջի մի քանի տասնեակ տարիներ։

Ներկայ տարվայ ընթացքում կառավարութիւնը զբաղվել է Մուղանի տափաստանի ոռոգման գործը առաջ տանելու և ճանապարհներ շինելու Սև ծովի շրջանում. այս աշխատանքները անհրաժեշտ են յիշած տեղերը գաղթի համար պիտանի դարձնելու։

Ինչ վերաբերում է գաղթականներին նրա՝ տալու հարցին, բաւականանք այս քանով, որ ամեն մի ընտանիք ստանում է 52—55 ր., որ քիչ չը պիտի նկատվի, քանի որ գաղթողները առհասարակ ունևորներից են։ Բացի այս, նրանց տրվելու է այս տարի մօտ 100,000 ր. նպաստ ուսումնարաններ և ազօթատներ կառուցանելու համար։ Գաղթականութեան վարչութիւնը այս տարի նշանակել է մի փոքր գումար Թարքամանների տնտեսական կեանքը ուսումնասիրելու գործի համար. այս թարքամանների հողերի մի մասը նոյնպէս պիտի տրվի գաղթականներին։

Ընդամենը մեր երկրի գաղթականական գործի համար ներկայ տարվայ ընթացքում նշանակված է ծախս պետական միջոցներից մօտ 810 հազար բուբլի, որ անցեալ տարվայ ծախսածից աւել է 30 տոկոսով։

Պետրոս Զաքարեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գանձակ, 31 դեկտեմբերի

Ամսիս 26-ին Կորինտպատ ծխ. դպրոցում, տրվեց սաներին ոտնածառի աշակերտական-գրականական երեկոյթ։ Գրական մասը բաղկացած էր երեք մասից, որոնց մէջ պարունակվում էին, 25 հայերէն և ռուսերէն արձակ և ոտանաւոր գրուածներ, 10 մանկական երգերով։ Ծրագիրը բովանդակից էր և ճոխ, որից երևաց, որ դատատուները մեծ ջանք էին գործ դրել սաներին ու ծնողներին զուարճութիւն ուրախութիւն պատճառելու համար։ Եւ այդ նրանց աջողվեց։ Զորս ամիս առաջ անգրագէտ աշակերտաշակերտուհիները, ազատօրէն արտասանում էին իրանց յանձնած ոտանաւորը կամ արձակ գրուածքը, մեծ բաւականութիւն պատճառելով ծնողներին և այլ հանդիսականներին։ Մանկական երգերը թնդեցնում էին դպրոցի շէնքը, բաւական ներդաշնակ ձայնով, ստեղծելով մի գեղեցիկ համերգային պատկեր, ծնողների և դպրոցի միջև։ Մարդ իրան զգում էր մի այլ աշխարհում, որի գործողները մանուկ սրտերն էին, իսկ ղեկավարները ուսուցիչները։ Մի աշխարհ, որից բղխում է սէր դէպի ծնողը, եղբայրը, ազգը, և շրջապատը։ Երեկոյթը վերջացաւ «Մեր հայրենիք» երգով։

Սաների աչքը դարձաւ ոտնածառին ու նուէրներին։ Վիճակով նուէրների բաշխումն սկսվեց։ Ծիծաղ, կեցցէ, ապրես, բացականչումները խառնված իրար հետ, սաներին կեանք ու հոգի էին տալիս ամեն մի նուէրը ստանալիս։ Նուէրների բաշխման վերջը ծնողների խնդրանքներից, կրկնեցին «Եկէք, երեխայք, եկէք» Նոր-Տարու երգը։ Ձեռքի ջերմագին սեղմումներով ծնողները իրանց սրտի մեծ բաւականութիւնը յայտնեցին դպրոցականներին ու ցրուեցին Կորիւնեանցի զանազան կողմերից գոհանալով դպրոցի մատուցած մեծ ծառայութիւնից, մատաղ ուղեղներին։ Խրախուսանքի և գովասանքի են արժանի դպրոցի դասատուները, որոնք դպրոցի հետ, կապված են ոչ թէ չաղ ռոճիկներով և այլ դպրոցական յարմարութիւններով, այլ միայն և միմիայն բարոյականով։

Բայց զարմանալի է...

Տեղիս փոխանորդ՝ Լ. վ. Փսերեանցը, այցելեց քաղաքիս բոլոր պետական և ծխական դպրոցները, մինչև իսկ անցաւ Բանանցի, Խաչակապի, Փիբի, Կիրանցի, Քարտատի, Միրզիկի և Ոսկանապատի ծխական ու պետական դպրոցները, որոնք տասնեակ վերստերով հեռու են գտնվում քաղաքից, բայց մի քանի քայլի վրա գտնվող Կորիւնեանցի եկ.-ծխական դպրոցը մինչև օրս չէ այցելել։

Ցոյս ունենք, որ այդ փոխանորդը գտնվում ոտներից յետոյ կայցէ, տալու իր բարի խորհուրդները և կանգնատուի խղճով դպրոցին կը նայի այն աչքով, ինչ՝ աչքով նայում է միւս դպրոցներին։

Խիզախ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ «Մշակի» ներկայ համարը բաղկացած է թերթ և կէսից։

✦ Յունվարի 6-ին, Վանքի առաջ եկեղեցում պատարագից յետոյ, Եփրեմ Եպիսկոպոս Սուքիասեան հայ հոգևորականների հետ խաչը ջուրը ձգեց։ Յորդանանը ձգված էր եկեղեցու բակում, ուր կանգնած էր անպէս բազմութիւն, որոնց թւում Թիֆլիսի համաքարները իրանց դրօշակներով։ Մինասյան օրը Վրաստանի էկզարխ Խանդոկէնտի արքեպիսկոպոսը խաչը ջուրը ձգեց Ալէքսանդրեան այգում, ուր նոյնպէս շինված էր շքեղ յորդանան։ Այդպէս լի էր ժողովրդի բազմութեամբ և զինուորականներով։

✦ Վարշավայից „Р. С.“-ին հեռագրում են, որ Նօբէլի սկսած նաւթի առաքումը Բաքուից Լենասան բացառապէս Ջրայինի ճանապարհով Ցարիցինի, Բիբինակի, Պետերբուրգի և Դանցիգի վրայով, իսկ յետոյ Վիսլա գետով, անհամեմատ արժան է նրա առաքման երկաթուղիով։ Այդ հողի վրա յուսահատ կռիւ մղող միւս նաւթարդիւնաբերողները մտադիր են հետևել նրա օրինակին։

✦ „Кав.“-ին հեռագրում են Բաթումից, որ յունվարի 7-ին այնտեղ բարձրացել է անսովոր ծովային փոթորիկ և եկել է ձիւն։ Բանտին ջուրը սպառնում է քանդել։ Նուրիէ լիճը դուրս է եկել ափերից և ծածկել քաղաքային այգին, ընթերցարանը և այլ։ Դրութիւնը լուրջ է։

✦ Բաքուից հեռագրում են, որ նաւթարդիւնաբերական աշխարհում մեծ իրանցում է։ Նօբէլ ֆիրմայի գործունեութիւնը շուկայում ստեղծում է մի այնպէս դրութիւն, որ սպառնում է միանգամայն ոչնչացնել մանր նաւթարդիւնաբերողների ընդհանուր խորհրդակցութիւն համագումարման միջոցներ ձեռք առնելու հար։

✦ Երեքշաբթի յունվարի 11-ին, Կասպական Ռուսաց Աշխարհագրական Ընկերութեան Թիֆլիսի բաժանմունքում Վենոգրադովը կը կարդայ բեֆերաստ Բաթումի շրջանի մասին, բնական-պատմական, գիւղատնտեսական և տնտեսական տեսակէտից։ Զեկուցման ժամանակ ցոյց կը տրվեն տարբեր մոգական լապտերներով։

✦ Կախէթիայի երկաթուղու ընդարձակութեան վարչութեան նախագահ ընտրվել է Թէօդոր Ալէքսանդրովիչ Լիպսկին, վարչութեան վերատեսուչներն են իշխան Պ. Թումանով, Վ. Վինոգրադով, իշխան Զ. Աւալով և Մ. Գուրվիչ։ Վերատեսչութեան թեկնածուներ՝ Մամացվի, Լ. Գաղներ և Պ. Շայկեվիչ։

✦ Յունվարի 12-ին կայանալու է վկասի բարձր կրթական հաստատութեան կենտրոնական յանձնաժողովի նիստը նախագահութեամբ Սատորը Վատացիի նախագահութեամբ։ Սատորը մօտիկ ապագայում մեկնելու է առաքման, որտեղից կը վերադառնայ բարձր հաստատութեան խնդրի վերաբերութեամբ։

✦ Քութայիսում ահագին քանակութեամբ ձիւն է եկել։ Օնի և Քուռայիսի միջև հաղորդակցութիւնը խզված է։

✦ Առաջին խաղարկու տոմսերից 10000 բուբլին տարել է Բաքուի նահանգային դատարանի թարգման Կարաղանովը։ Ինչպէս լսել է „Баку“-ի խմբագրութիւնը, բաղդաւոր թարգմանը անմիջապէս խնդրագիր է ներկայացրել դատարանի նախագահի անունով պաշտօնից հրաժարվելու մասին։

✦ Կովկասի Փոխարքային յունվարի 5-ին ներկայացաւ Բաքուի քաղաքագլուխ Բաէվսկին։

✦ Թիֆլիս է եկել պաշտօնական գործերով Բաքուի նահանգապետ Ալիշէվսկին։

✦ Թիֆլիսի քաղաքային առաջին ապատարանում անցեալ դեկտեմբեր ամսում դիշերել են 168 տղամարդ 3,086 անգամ։ Դիշերողները ըստ ազգութեան բաժանվում են հետևեալ կերպով՝ ռուսներ՝ 47 տղամարդ, հայեր՝ 75 տղ., վրացիներ՝ 33 տղ., լեհեր 3 տ., գերմանացիներ՝ 6 տղ. թուրքեր՝ 2 տղ. սարբիներ՝ 1 և այլազգիներ՝ 1 տղամարդ։

✦ Լենքօրանից „Т.Л.“-ին հեռագրում են, որ ծովը մռնչում է. նաւերը շտապում են նաւահանգիստները։ Կուր գետ սառցապատ է, ձուկ որսալը դադարած է։ Զկնարդիւնաբերողները վնաս են կրում։

✦ «Ախ.»-ին հաղորդում են արժանահաւատ աղբիւրից, որ Ալէքսանդրօպոլի նախկին քաղաքագլուխ Յ. Տիգրանեանը Երևանի գումայի կողմից առաջարկ է արված իր թեկնածութիւնը դնելու քաղաքագլխի պաշտօնի համար։

✦ Այսօր, Կովկասեան Բժշկական Ընկերութեան շինութեան մէջ Ալիխանեանը ժամը 9½—11 ցերեկվայ կը կարդայ հայերէն նաւթի արտադրութեան մասին։ Տիկին Դիդիան վերացուցչի՝ ժ. 11—12 կը խօսէ «Պրինցի և ծիծեռնակի» մասին։ Հասակաւորների համար մարը բժ. Մուխարինսկին ռուսերէն ժամը 5—6 կը դասախօսէ ժանտախտի մասին։

✦ Մինչև օրս ամեն մարդ կարող չէր ձեռք բերել վճարով էլեքտրաքարշը տարեկան տոմսակ, որով գնողը իրաւունք ունէր կան տոմսակ, որով գնողը իրաւունք ունէր

էլեքտրաքաշ նստել բոլոր գծերի վրա։ Այժմ, ինչպես տեղեկացնում են, էլեքտրաքարշի կենտրոնական վարչությունը կարգադրել է վերացնել այդ տեսակ տոմսակների վաճառումը։

✦ „Зак."-ն հաղորդում է, որ Թիֆլիս է կանչված կարևոր գործերի քննիչի պահանջով երկրորդ Պետական Դումայի անդամ Սա. Տեր-Ասատիքյանը, որը, լսագրի ասելով, իբրև թէ մեղադրվում է «Դաշնակցություն» կուսակցությանը պատկանելու մէջ։

✦ Բաքուի քաղաքապետի պաշտոնակատար Բոլշակովը „Баку" և „Кавказскій Телеграфъ" լրագիրների խմբագիր Մր. Վէրմիշեանին կառավարական գործողությունների և կառավարական կրթական հաստատությունների գործունեության մասին սխալ տեղեկություններ հաղորդելու համար ենթարկեց 200 ր. տուգանքի։

✦ Կովկ. Հայոց Բարեգ. Ընկ. խորհուրդը խնդրում է մեզ յայտնել, որ նա ստացել է ծննդեան տոների առիթով նուիրատուություներ։ Յօգուտ Ընկ. աշակերտական տների և էժանագին ճաշարանի՝ տիկ. Մարգարիտ Աբեանից 50 ր., Գասպար Տէր-Մարգարեանից 20 ր.։ Յօգուտ աղքատաց Գասպար Տէր-Մարգարեանից 20 ր., տիկ. Մարգարիտ Անագէանից 5 ր., Ռաֆայէլ Մելիք-Ադամեանից 1 ր.։ Խորհուրդը յայտնում է իր խորին շնորհակալությունը բոլոր նուիրատուներին։

✦ Ներկայումս Թիֆլիսում բացել է լուսանկարչական արհեստանոց Յ. Միրաքեանը, որ լուսանկարչական արհեստը ուսումնասիրել է Պարիզում։ Լուսանկարիչ Միրաքեանը Պարիզի առաջին լուսանկարչական արհեստանոցի, այն է Պիերուի մօտ, որ և ֆրանսիական նախագահի լուսանկարիչն է, 10 տարվայ չափ ծառայել է իբրև գլխաւոր կառավարիչներից մէկը։

✦ Թիֆլիսի կանանց բարձր դասընթացքների վարչությունը Բաքուի նաւթարդիւնաբերական համագումարի խորհրդից ստացաւ 3,000 ր. նպաստ։

✦ Վակէ արուարձանի կալուածատէր իշխ. Ա. Ա. Բէհզությանը յայտնել է Վրաստանի էկզարխին, որ ցանկանում է ուղղափառ հոգևոր դպրոց կառուցանելու համար նուիրել 1000 քառ. սաժ. հողաբաժին Վակէում։

✦ Պետական գանձատան ստորին պաշտօնեայ Լիտանովը, իւրացնելով գանձատան անձանց տուած գումարները՝ մօտ 4000 բուբլի որ նա տալու էր գանձատանին առևտրական վկայականներ ստանալու համար, փախել է յայտնի չէ թէ ուր։

✦ Այս տարի էլ, անցեալ տարիների նման, Գրիգոր Նախշունեանը նուիրել է «Մշակի» մի օրինակ Հալաբարի էջմիածնեցոց եկ.-ծիսական դպրոցին։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Յունվարի 7-ին, առ. ժամը 10-ին, էջմիածնի և Սուրբ-Մինասի փողոցների անկիւնում Թիֆլիսեցի Դաւիթ Մարտիրոսեանի տանը վառարանը շատ վառելուց հրդեհ ծագեց, որ հանգցրեց հրշեջ հաշէջները խումբը։ Վնասը հասնում է 600 ռուբլու։

✦ Նոյն օրը Բատարէյնայա փող. № 14 տանը, ուր շատ կեցողներ կան, նոյնպէս հրդեհ ծագեց, որ հանգցրին զինուորների օգնությամբ։ Մարդկանց հետ դժբաղդություն չը պատահեց։ Վնասը հասում է 500 ռուբլու։

✦ Ներսիսեան դպրոցի շինության հրդեհը, որ հանգցրին մի քանի օր առաջ, անցեալ օրը դարձեալ բռնկվեց փոքր չափով։ Հրդեհաշէջ խմբի օգնությամբ կրակը հանգցրին։

✦ Յունվարի 6-ին, Թիֆլիսեցի Մարթա Մայիլեան որ ապրում է Կոնստանտինօվսկայա փողոցում, Թոփչի Բերոյեանի տանը, № 10, յայտնեց ոստիկանությանն, որ նրա մանկահասակ խուլ ու համր 6 տարեկան Հայկանուշ աղջկան, յունվարի 6-ին, ց. ժամը 1-ի մօտերը, տանտիրոջ որդի Արտէմ Թոփչի Բերոյեանը 32 տարեկան խաբեբայությամբ տանում է իր մօտ բնակարանը և բռնաբարում։ Թոփչի Բերոյեանը պրիստաւ Դաւիդովի ձեռքովկալանաւորված է։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 4 յունվարի

Ուրախությամբ կարդացի Բաքուում մեր հանմեդականների քոյրերի հրատարակելիք թերթի մասին։

Շնորհաւորում եմ և ի սրտէ ցանկանում աջողություն այդպիսի մի գեղեցիկ ձեռնարկությանն։

Իսկ մենք հայուհիներս։

Սուտ չէ ասում առակը՝ «Կամաց երթաս շատ կիմանաս»։

Եւ նրանք, մահմեդականուհիները այժմս առաջ են գնում աւելի մտաւոր զարգացման մէջ, քան մենք հայուհիներս XX դարում։

Դեռ նոր էր, որ ես առաջարկեցի մի քանի տիկինների հրատարակել մի թերթ կանանց համար՝ «Ցնտեսությունն և խոհանոց» վերնագրով, բայց ցաւալի պատասխան ստացայ մէկից։ «Այդ գործը մեզ մօտ չի գնայ, այդպիսի բանով չեն հետաքրքրվում. աւելի լաւ չէր լինի, որ մի լաւ դերձակուհի բերել տայինք Պարիզից և մրցէինք ժանի հետ, նա բոլոր հարուստներին ձեռքն է հաւաքել և ահագին գումարներ է աշխատում» և այլն։

Մէկն այդպէս է ասում, միւսն հրճվում է, որ «օրիորդներն այնպէս են հագնվում, ինչպէս պարիժանկներ», և այլ նոյնանման ձրազներ որքան կուզենաք։

Բայց հետաքրքրվել ոնտեսությամբ, ես թեխանների առողջ կրթությամբ—արժէ՞, դրանք մանր բաներ են...

Բայց կարծում եմ, որ ժամանակ է մեզ, հայուհիներիս, կանանց հարցի վերաբերեալ մի սեփական օրգան ունենալ։

Ժամանակ է մտածելու։

Ամենք մեր մահմեդականուհի քոյրերից, օրինակ առնենք նրանցից և ոչ «պարիզուհիների» արտաքինից։

Օլգա Գենջեան

—

Պետերբուրգ, 29 դեկտեմբերի 1910 թ.

Պետերբուրգի հայ ուսանողությանն «Ժողովի» բիւրեղ սրանով խնդրում է իր պարագաներին անմիջապէս ուղղել Բիւրոյին իրանց պարտքերը ամբողջապէս կամ մասամաս։

Պարագաները թող չը մոռանան իրանց ուսանողական տարեշրջանի օրերը, սովի ուրուականը ու նրա ճիրանները և շտապեն իրանց քաղաքացիական պարտքը կատարելով, թեթևացնել չքաւոր ուսանողության ներկայ անմխիթար կացությունը։

Նախագահ Բիւրոյի՝ Հ. Տէրտէրեան
Քարտուղար՝ Հ. Զոլախեան

Յ. Գ.—Փոդերը ուղղել՝ Петербургъ, Петерб. сторона, Красносельская улица, д. 4, кв. 73. Студенту Варосу Бабаянъ.

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Կիրակի, յունվարի 2-ին, Վրաց թատրոնի գոյության 61-ամեակի տարեդարձի օրը, Վրաց թատրոնում տեղի ունեցաւ հանդիսաւոր ներկայացումն։

Նախ ներկայացվեց մի տեսարան, որը պատկերացնում էր Վրաց թատրոնի հիմնադիրների պատրաստությունների մի տեսարան։

Բոլոր դերակատարները ժամանակակից գործողների համապատասխան գրիմներով էին, որոնց թւում և ժամանակի փոխարքայ իշխան Մ. Վորոնցովը, որը խրախույս է կարդում Վրաց թատրոնական գործի հիմնադիրներին։

Նոյն գիշերը, երկրորդ անգամ խաղացվեց մի նոր պիէս «Զոհ» խորագրով, որի հեղինակն է այժմս իրաւունքներից զրկված և մէկ տարվայ բանտարկությանն դատապարտված մի սպայ, Գէղէվանիշվիլի անունով, որը բանտում գրել է վերոյիշեալ պիէսը։

Նա դատնում է ազատագրական շարժումների ընթացքում Վրաստանում գործողների դրական և բացասական երևոյթների շուրջը, պատկերացնելով գործողների տիպերը։

Դուք պիէսի մէջ կը տեսնէք տգէտ, բայց ազնիւ, ասպետական զգացումներով տոգորված գիւղական գործողի տիպ, որը իր տմարդի մի ընկերոջ գործած յանցանքը իր վրա է վերցնում և կախաղան բարձրանում, թէև հէնց այդ տմարդին էր ամենից շատ գոռում, իշխանությունն անում, յաւակնություն ունենալով նոյնիսկ գիւղականների առաջնորդ և ուսուցիչ հանդիսանալ, սակայն կառավարական խստությունների ժամանակ «մկան ծակն» է մտնում, քաջություն չունենալով խոստովանել, որ գիւղի ծայրում գազանաբար մորթված «ստարժնիկի» ըսպանողը ինքն է, որից տարել է հրացան և փամփուշտակալ։

Պրէսը վերին աստիճանի հետաքրքրական բովանդակություն ունի, թէև մասամբ ձգձգված է։

Զարմանալի մի յատկություն ենք նկատել վրացի գրողների մէջ առհասարակ։

Իրաք շատ դժուարությամբ կը գտնէք վրացերէն մէկ պիէս, որի մէջ դուրս բերված չը լինի մի բացասական հայր տալ, մերթ որպէս վաճառական, մերթ «դուխան չի», մերթ վաշխառու։

Մենք այս նկատողությունը չէինք անի, եթէ ի նկատի չունենայինք այն հանգամանքը, որ նման բացասական տիպերի բեմ հանելը, միշտ հայերի կերպարանքով, շովինիզմի կրակն է բորբոքում, մի երևոյթ, որին դէմ ենք ամբողջ հոգով։ Այս և սրա նման երևոյթները նսեմացնում են պիէսի արժէքը։

Սա անցանկալի մի սովորություն է, որ մտել է վրացի գրողների մէջ։

Թատրոնը լի էր հասարակությամբ։

—

Յունվարի 6-ին, տեղի ունեցաւ երիտասարդ դերասան Ն. Դելարաձէի բենեֆիսը։ Խաղացվեց Կ. Մեսխիի «Թամար Բատօնիշվիլի» պատմական 4 գործ. պիէսը։

Մեծ թւով հասարակություն էր ներկայ ներկայացմանը։ Մեզ համար միանգամայն անհասկանալի է մնում, թէ ինչ միտք ունի նման անկապ ու անբովանդակ պիէսներ խաղալը։

A—s

—

Բիսօնի և Լեվլէրվի սրամիտ «Խանդոտ» կոմէդիայում, որ ներկայացվեց Ժողովրդական Տանը յունվարի 2-ին, հանդէս եկան սիրողների հետ նաև հայ դերասանական խմբի անդամներից մի քանիսը։

Արմէնեան իր շնորհքին վայել օրինակելի կերպով կատարեց Մօրիյլի դերը։

Տ. Յասմիկից պատրաստվում է ապագայի համար կարևոր ոյժ։ Տիկնոջ խաղը (Ժերմէն) գոհացրեց մեզ։ Նա միայն ուշք դարձնելու է դերը լաւ սերտելու վրա։

Միրզոյեան և տ. Զաբէլ փորձված դերասաններ են. իւրաքանչիւրը իր սմպլույի մէջ միշտ էլ նպաստում է խաղի տպաւորությանն։

Առաջադիմում են հետզհետէ Ղազարեան, Լաքա։

Տ. Նոնիկեան իր փոքրիկ դերերում սովորականի նման աշխոյժ էր։

Սիրողներից պէտք է մատնանշենք, որ օր. Ժամին կատարերագործվում է, Գալըստեան լուրջ է վերաբերվում դէպի գործը, օր. Թարխանեան խաղում է սոնուն։

Նոր է սիրող Յարութիւնեան, որ ունի լաւ ձայն, բաւարար են դիկցիան և շարժումները և պէտք է աշխատէ, որ վատահ խաղից չափազանցությունն դուրս չը գայ։

Պիտանի ոյժ կարող է դառնալ իր տեղում տ. Վարդիթեր։

Վերջում պէտք է խաղացվէր «Համբոյր» ծիծաղաշարժ վոդեվիլը, բայց տ. Արմէնեանի անակնկալ հիւանդությանն պատճառով խաղացվեց «Սիրահարը սեղանի տակ»։ Այստեղ աչքի ընկան օր. Ժամին և տ. Վարդիթեր. Ղազարեան բաւարար էր. Փիրումեանից մենք աւելին էինք սպասում, մանաւանդ որ իր ապագայի դերի մէջ էր։

Ընդհանրապէս ներկայացումը տոնական կերպարանք ունէր և թատրոնը ամբողջովին լցված հասարակությունը հեռացաւ գոհ տրամադրության տակ, ծափահարելով անվերջ դերակատարներին։

Հետևեալ ներկայացումը տեղի կունենայ յունվարի 15-ին։

Ե.

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

✦ Հանգուցեալ երաժշտագէտ Մակար Եկմալեանի յիշատակը յարգողների մէջ դեռ սրանից երկու տարի առաջ Թիֆլիսում, տ. Հ. Մարտիրոսեանի նախաձեռնությամբ, միտք յղացաւ որևէ գործով յաւերժացնել հանգուցեալի յիշատակը, որի համար տալ մի համերգ երաժշտագէտի երկերից։

Սակայն, ցաւ ի սիրտ պիտի ասել, որ այդ համակրելի ձեռնարկությունը այն ժամանակ գլուխ չեկաւ վրա հասած ձախորդ հանգամանքների շնորհիւ։

Այժմ, այդ միտքը իրագործելու համար, համակրողների մի շրջանում անվում են որոշ քայլեր։

Անցեալ օրը Յովսէփ քահ. Տէր-Պետրոսեանի բնակարանում ժողովվեցին Եկմալեանի յարգողների մի ստուար տեղական անձինք, որոնք, մտքերի փոխանակությունից յետոյ, որոշել են Թիֆլիսում տալ մի համերգ, որին մասնակցելու համար հրաւիրել հանգուցեալ երաժշտագէտի աշակերտներին։

Այդ նպատակով կազմվել է մի յատուկ մասնաժողով, որը և մշակելու է այն երեկոյթի ծրագիրը, որ տրվելու է հանգուցեալի յիշատակին։

Բացի դրանից մտադրություն կայ խնդրել հանգուցեալի բարեկամներից մինին՝ կարդալ մի ռեֆերատ Եկմալեանի կեանքի և գործունեության մասին։

✦ Վաղը Արտիստական թատրոնում տեղի կունենայ դերասան Զարիֆեանի բենեֆիսը։ Խումբը կը խաղայ Ռոստանի յայտնի «Սրծուիկ» դրամատ։ Հայ հասարակությունը բարոյական պարտականություն ունի խրախուսել իր դերասանական համեստ և մեկնոյն ժամանակ պիտանի ոյժին։

✦ Թիֆլիս է եկել մի քանի գաստրոլների համար յայտնի երգչուհի Վան-Բրանդտ։ Տիկինը առաջին անգամ հանդէս կը գայ այսօր «Տրաւիատա» օպերայի մ.։

✦ Արտիստ Նանօբովը համաձայնել է երգել Ժողովրդական Տանը «Ռիգոլետտո» օպերայի մէջ։

✦ Մօտիկ ապագայում որոշված է ի պատիւ դերասանուհի Զաբէլի՝ նրա 30-ամեայ բեմական գործունեության առիթով տալ մի հանդիսաւոր բենեֆիսային ներկայացում։ Շուտով կը կազմվի մի յանձնաժողով Դրամատիկական Ընկերության վարչության, Զուբալովեան Ժողովրդական Տանը գործող հայկական սեկցիայի վարչության և դրամատիկական խմբի անդամներից, նաև հասարակության կողմից յատուկ հրաւիրված անձերից։ Այդ յանձնաժողովը զբաղվելու է վերոյիշեալ ներկայացման կազմակերպության գործով։

✦ Հայոց Դրամատիկական Ընկերության վարչության կողմից Նիկուլինի 25-ամեայ բեմական գործունեության յոբելեանի օրը ներկայացուցիչներ լինելու են վարչության նախագահ Տ. Յովհաննիսեան և փոխնախագահուհի տ. Վ. Մամուլեան, որոնք մի ուղերձով կողմնակն յօբելեար Նիկուլինին։

✦ Դրամատիկական Ընկերության վարչությունը Գ. Սունդուկեանի «Բանդված Օջախ» կոմեդիայի 40-ամեակի առիթով պատրաստում է տալ մի հանդիսաւոր „Gala" ներկայացում ի պատիւ ալեզարդ դրամատուրգ Գ. Սունդուկեանի։ Կը ներկայացվի «Բանդված Օջախ» կոմեդիան մասնակցությամբ դերասանական խմբի բոլոր առաջնակարգ ոյժերի։ Ներկայացումը լինելու է շատ հետաքրքրական։

✦ Զուբալովեան Ժողովրդական Տանը հայկական ժողովրդական ներկայացման հերթական օրը, յունվարի 15-ին, հայկական սեկցիայի հրաւէրով և Դրամատիկական Ընկերության վարչության թոյլտվությամբ Դրամատիկական խումբը ներկայացնելու է Շիրվանզադէի «Արմենուհի» նոր պիէսը։ Այս առաջին ներկայացումն է, որ տալիս է հայ դրամատիկական խումբը Զուբալովեան Ժողովրդական Տանը մատչելի գներով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԿՐԷՏԷՊՈՒՄ

Աթէնքից, արժանահաւատ աղբիւրից, հաղորդում են, որ դրությունը կրէտէյում աւելի ևս սուր կերպարանք է ստանում, շնորհիւ մահմեդականների գրգռիչ գործելակերպի, որոնց, ըստ երևոյթին, դրդում են Կ. Պոլսից։ Կանէայի մուֆթին խորհրդակցությանն հրաւիրեց մահմեդականներին՝ իբրև թէ կրօնական խրատներ կարդալու համար։ Եկան 400-ից աւելի մարդ։ Մուֆթին սկսեց նրանից՝ հարց տալով յանուն մարգարէի ինչու իր հետևողները բարեկամություն են անում «քրիստոնեայ շների» հետ, փոխադարձակցություն պահպանելու հաւատացեալների հետ գինու վրա, որ նախ դէմ է զօրանին, իսկ երկրորդ՝ հակահայրենասիրական է, որովհետև նրանց ամեն մի դրախտը հարկաւոր է թիւրքական հաւատացյալների համար։ «Թող յայտնի լինի ձեզ,—վերջացրեց մուֆթին,—որ Թիւրքիայի գործերը լաւանում են օրէ-օր, մինչդեռ քրիստոնեաները հետզհետէ ընկնում են։ Շուտով այն հաւատացյալը, որի մասին ես խօսում եմ, կերևայ այստեղ, այն ժամանակ քրիստոնեաների համար կը հասնէ վերջին ժամը»։

ՌՈՒՍԱՑ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Լրագրական այն տեղեկության առիթով, որ Պարսկաստանի հիւսիսում Ղազվինում բացվել է պարսկական բանկի գործակալություն, որի գլուխ կանգնելու է իբրև թէ անգլիացի, „У. Р."-ի թղթակիցը այցելել է արտաքին գործերի մինիստրությունը ուր նրան յայտնել են հետևեալը.—Մեր մինիստրության համար Պարսկաստանի հիւսիսում, ռուսական ազդեցության շրջանում, բանկի գործակալություն բանալու տեղեկությունը հանդիսանում է միանգամայն անսպասելի։ Պարսկաստանի մեր դիպլոմատական և առևտրական ներկայացուցիչներից մինք դեռ ևս ոչ մի տեղեկություն չենք ստացել այդ առիթով, բայց եթէ անգամ այդ տեղեկությունը իրողություն լինի, այնուամենայնիւ չէ կարելի խօսել ռուսական շահերի խախտման մասին։ Անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ դեռ 1907 թ-ին երկու շահագրգռված պետություններ ազդեցության շրջանը որոշելիս դրությունը Պարսկաստանում այնպիսի էր, որ բանկը բանալը չէր կարող կապված համաձայնություններին ընդդէմ համարվել։ Ռուս-անգլիական համաձայնությունը դնվում է իր բովանդակ ոյժի մէջ և ոչ մի հիմք չը կայ խօսք բանալ նրա խախտման մասին։

Յետագայ խօսակցության մէջ թղթակիցը շօշափեց այն յուզալի տեղեկությունը, որ ստացվել է Պետերբուրգի դիպլոմատիական շրջաններում այն մասին, որ պարսկական նոր կառավարությունը դիմում է ուղղել Միացեալ-Նահանգների և այլ պետությունների կառավարություններին, խնդրելով պաշտպանել Պարսկաստանը անգլո-ռուսական բռնի ազդեցությունից։ Այդ առիթով մինիստրության մէջ յայտնեցին, որ այստեղ այդ գրգռիչ տեղեկության վերաբերվում են վերին աստիճանի յոռետեսությամբ և ներկայ քաղաքական կացության պայմաններում նրան համարում են քիչ հաւանական։ Մինիստրությունը տրամադիր է այդ տեղեկության մէջ տեսնել կրկնումն վերջերս տեղի ունեցած այն դէպքի, երբ պարսկական պրինց-խնամակալը իբր մի նամակ էր գտեղել Լօնդօնի մի լրագրում, որով կոչ էր անում պաշտպանել Պարսկաստանը ռուսական քաղաքականությունից։ Փոնությունը պարզեց, որ ոչ մի կոչ պրինց-խնամակալը չէ ուղղել, իսկ նամակը, որ մոլորության մէջ ձգեց աշխարհի կէսին, գրել էր ոչ թէ պրինցը, այլ ինչ որ պարսիկ, որի ազգանունը չափազանց նման է պարսկական պրինց-խնամակալի անունը։

ՎԱՐԱԳԸ ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ՀԱՆԴԷՊ

Վան, 20 դեկտեմբերի

Վեհ. Մատթէոս Կաթողիկոսի անակնկալ մահվան գոյժը ամսիս 17-ին, կէսօրվանից 2 ժամ առաջ հասաւ Վարագ և սաստիկ յուզում առաջացրեց։ Ուսուցչությունը միաբանության հետ միասին անմիջապէս դպրոց մտաւ, դասերն ընդհատվեցան։ Դպրոցի տեսուչը բօթը աշակերտության գուժելով՝ յայտարարեց թէ ի նշան սգի դպրոցը երկու օր փակ պիտի մնայ. ամսի 18-ին տրվելիք գրական երեկոյթը մի շաբաթ կը յետաձգվի, իսկ ամսի 19-ին, կիրակի, պիտի կատարվի հոգեհանդիստ և սգահանդէս։ Դպրոցի բարերարի անսպասելի մահը որբուկ սաների մէջ էլ լաց ու յուզում առաջացրեց։

Կիրակի, ամսի 19-ին, հանդիսաւոր պատարագից յետոյ կատարվեց հոգեհանդիստ, իսկ ցերեկը՝ դպրոցի մէջ սգահանդէս, ուր ուսուցիչներից երկուսը խօսեցին հանգուցեալ Կաթողիկոսի կեանքի և նկարագրի մասին, իսկ աշակերտներից երեքը կարդացին Վեհափառի յիշատակին նուիրված ճառեր և ոտանաւորներ. երգեցիկ խումբը երգեց մի քանի զգայուն և մելամաղձոտ երգեր։

Հանգուցեալ Կաթողիկոսի մահը անտարակոյս մեծ ցաւ պատճառեց ամբողջ հայությանն. ռուսահայերդ թէև առհասարակ սկզբից յոռետեսությամբ և վերապահությամբ նայեցիք «Երկաթէ Պատրիարքի» կաթողիկոսությանն վրայ, բայց մենք թիւրքահայերս կը սպասէինք, որ ժամանակը երևան հանէ Իզմիրլեանի իսկական արժանիքը հայրապետական գահի վրա։ բայց ձվ կը սպասէր այսպիսի անակնկալի...

Վարագայ զգացած վիշտը խոր է։ Խրիմեանի կառուցած հաստատությունը, որը աւելի բարոյական հիմունքների վրա հաստատված է, Իզմիրլեան մտածեց նիւթապէս ամրացնել։ Դեռ մի քանի ամիս առաջ յօբելեանի առիթով՝ Թիֆլիսի Հանդ. Մասնաժողովին առաջարկեց դրամ մը յատկացնել Վարագայ դպրոցին։ Եւ այդ դրամը—500 օսմ. լիրայ, այսօր իբրէ անձեռնմխելի դրամագլուխ Պոլսոյ Վէնքը բանկային մէջ կը մնայ, որի տոկոսիքով սաներ պիտի պահվին։ Վարագայ հոգաբարձությունը հեռատես բարերարի մահվան առիթով որոշած է յիշեալ գումարը կոչել «Իզմիրլեան դրամագլուխ», իսկ նրա տոկոսիքով պահվող աշակերտները՝ «Իզմիրլեան սաներ»։

Հոգաբարձությունը սգահանդէսից յետոյ ցաւակցական հեռագիրներ ուղարկեց էջմիածին տեղապահի անունով։ Աշոտ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Հնդկական մեծ երկաթուղագծի հարցի առիթով, մինիստր Տիմաշէվի մօտ կայացած խորհրդակցությանը հանդէս եկան Կրեստօվնիկովը և Տիմիրեազէվը, առաջինը դէմ, երկրորդը յօգուտ նախագծի։

✦ Ֆինլանդական տառադիզ լրագիրներ ենթարկվում են պատասխանատուության զօրքերին վիրաւորելու համար։

✦ Երկրաշարժը Միջին Ասիայում շարունակվում է։ Վէրնի քաղաքի բնակիչները ստիպված ապրում են դրսում, ցրտի մէջ։ Սառնամանիքները հասնում են 15°-ի։

✦ Լօնդօնի առևտրական դպրոցի ներկայացուցիչ Վիլիամ Նաու հանդէս եկաւ մի առաջարկությամբ՝ կազմակերպել եւրոպական վեց մեծ պետությունների երաշխաւորությամբ Միացեալ-Նահանգներում սիօնական դաշնակցություն՝ փոխադրելու համար հրէաներին Պաղեստին և Սիրիա։

✦ Մուշի առաջնորդ Խարխանեան եպիսկոպոսը հեռագրել է պատրիարքարան՝ թէ օսմանեան կառավարությունը արգելել է Մուշի կրթական ընդհանուր տնօրէն Սիմէոն Զաւարեանի պաշտօնավարությունը, ի նկատի ունենալով, որ նա ռուսահպատակ է։

✦ Յայտնի պարսիկ ըէակցիոնէր Բահիմ խան, որ ապաստան գտաւ Ռուսաստանում և այժմ վերադարձել է Կորից Ղարադաղ, ճանապարհվել է Թաւրիզ։

✦ Ժանտախտը Մանջուրիայում սաստկանում է։

✦ Ֆրանսիական սենատի նախագահ ընտրվեց Ա. Դիւբոստը։

✦ Էջմիածնի Սինօդը որոշել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը փութացնելու համար, միջնորդել Կովկասի Փոխարքայի միջոցով Բարձր կառավարության առաջ, որպէսզի ընտրությունը կատարվի այս տարվայ սեպտեմբեր ամսին և ոչ Կաթողիկոսի մահից մի տարի յետոյ, ինչպէս պահանջում է Պոլսոյ Աթոռը։

✦ Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Մոսկվայի բանկային «Եղբայր Ժամարեաններ» տան անդամներից մէկին՝ Յովհաննէս Իսահակեան Ժամարեանին բարձրագոյնս շնորհված է կոմմերցիայի սովետնիկի (վաճառականության խորհրդական) կոչումը։

✦ Ներսիսեան դպրոցի վերջին հրդեհից յետոյ բաւականաչափ վնասվել է ֆիզիկական կաբինետը, որ մնացած շարժական կայքի հետ ապահովագրված է երկու ընկերությունների մէջ։

✦ Պարսից պետության խնամակալ Նասր իլ-Միւլքը Եւրոպայից հասել է Բաքու՝ Թէհրան գնալու համար։ Այդ առիթով հարկաւոր ենք համարում յայտնել, որ այն նամակը, որ նրա անունով տպված էր Լօնդօնի թերթերից մէկում Անգլիայի և Ռուսաստանի դէմ, իրա Նասր-իլ-Միւլքինը չէ եղել, այլ մի օտար պարսկի, որի անունը նրա հետ շատ մօտ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՍԻՍԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ 11—12 ժ.
Բ, Ս. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժության և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մարկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐԶԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ՆԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐ

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐԶԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Փ. ՄԱՐՑԻԶԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան
3. 0—2

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Զինուորական մասնագէտ-բժիշկների
ԵՐԹԱԼԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Վանքի մեծ փողոց, № 3, Ալէքսանդրեան այգու մօտ։
ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ Է 50 ԿՈՊ.
Տէլէֆոն № 431.

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ. ժամը 9½-ից մինչև 5-ը ցերեկվայ։
ԱԽՎԼԵԴԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցերեկ.։
ՈՒԿԼԱԴՆԻԿՈՎ Ի. Ս.—ներքին հիւանդութիւններ, ամեն օր՝ 4—5 ժամը ցերեկ.։
ՎՆՈՒԿՈՎ—խիբուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 12—1 ժ. ցերեկ.։
ԲԻՐԷԼ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ. ցերեկ.։
ԳՆԵՑՑ Դ.—աչքի հիւանդ., ամեն օր՝ ցերեկ. ժ. 1—2-ը։
ՄՈՍՍԷ—երեխ. և ներքին հիւ. ամեն օր՝ 1—3 ժ.։
ԽԱՏԻՍՍՎ Ն. Դ.—մանկաբարձ. և կանանց հիւ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի և երեքշ. օրերից։
ՆՈՎԻՑԿԻՑ—մանկաբարձ. և կանանց հիւ., ամեն օր՝ 1—2 ժ.։
ՍԱՐԱՊ—ներքին և երեխայոց հիւ., ցեր. 12—1 ժ.։
ՏԷՏՐԱՇԷՆ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.։
ԱՍԿԻՍՍՎ Ն. Մ.—ականջի, կոկորդի և քթի հիւ., առ. ժամը 1—2-ը ցեր.։
ԿԻՆ ԲԺ. ԻՍՍՍԷԼԲԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.։
ՎԵՍԵԼՈՎԱՀՈՎԱ Ն. Ն.—խիբուրգ. հիւ., ամեն օր՝ ցեր. ժամը 2—3-ը։
ՀՈՒԴՆՈՎԱՎՍԿԻ—ջղային, հոգեկ. հիւանդ. և էլեքտրոաէրապիա, ամեն օր, բացի կիրակի օրերից՝ ցեր. ժ. 11¼—12½-ը։
ՄԽԻԹԱՐԵԱՆՑ Ա.—սիֆիլիս, վեներական և կաշուի հիւ. ամեն օր՝ 9½—10½ ժ. առ.։
ՊՕՆԴՈՒՆԻ—ջղային հիւ. և էլեքտրոաէրապիա. ամեն օր՝ ժամը 2—3-ը։
Համախորհուրդ, օպէրացիաներ, մասսաժ, ծաղկի պատուաստումն, անալիզ, հիպնօզ, սոնդումների և ծառաների քննութիւն—առանձին վճարով։ Սիֆիլիսի վերաբերմամբ, արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի։
(կ.) 3. 100—66

ԲԺՇԿԱՊԵՏ Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վերեամինսկայա փողոց, № 8.
(կ. հ.) 564. 100—74

ԲԺԻՇԿ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Ականջի, բերանի, բկի,
հիւանդութիւնները,
Ընդունելութիւնը (առաւօտեան 9—1 ժամը. երեկոյեան 5—7 ժամը.
Վերեամինսկայա փ. № 13, տ. Սէյլանովի, 3-րդ գիմնազիայի կողքին։
(օ. մ.) 1227. 100—30

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վենեբական և կաշուի հիւանդութիւնների։
Սիֆիլիսի բժշկութիւն Էրլիխի «606»-ով
Ընդունելութիւնը (12½—2 ժ. ցերեկվայ։ 5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Հասցէն (Սօլոլակի, Բէբուտովսկայա, № 33.
(Сололаки, уголъ Бебутовской и Паскевича, 33.
(չ.ու.կ.) 1134. 166—53

ԲԺԻՇԿ Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔԻՍ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն (10—11 ժ. առ. (երեխաների)
ամեն օր (5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆոն № 388.
(Ե. հ. կ.) 909. 100—64

ԲԺՇԿԱՊԵՏ Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

ՆԵՐՔԻՆ և ԶՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունել. ամեն օր (առաւօտ. ժ. 9—12 (երեկոյեան ժ. 5—7
(Ե. հ. կ.) 1254. 100—22

ԲԺԻՇԿ Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Ներքին, երեխայոց և ատամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրոֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11. (երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067.
(օ. մ.) 1179. 100—50

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միքայէլեան փող. № 24/4.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առեւտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Դասընթացքներ կատարվում են. կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Musier-ատրեսիր-ում։ Նիւթերն առնվում են բէլ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշվապահութիւն (պարզ իտալ., գերմ., ֆրան., ամերիկական, բանկային և զործարանական). 2) Առեւտրական թուաբանութիւն. 3) Գաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առեւտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առեւտրական թղթակցութիւն. 6) Թուաբանութիւն համարձակ վրա. 7) Գայլուշագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ) ոչ պարտադիր. 1) օտար լեզուներ. 2) տպագրութիւն. 3) գեղագրագիտ (բամնգատն և ուր.) և 4) առեւտ. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և գաս-գաս։ Ունկնդիրների թիւն չատութեան պատճառով բացվում է երկրորդ դասընթաց ռաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը 10—12 և 4—7 ժամը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շենքերում։
Կուրսերի հիմնադիր՝ առեւտ. գիտութեան կանդիդատ՝
(ա.օ.) 24. 0—1 Տ. ՓԻԼՈՅԵԱՆ

ՍԱՐԱՏՕՎԵԱՆ ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ և ԳՈՒԼՊԱՆԵՐԻ (սարպինկային մանուածքից) ՖԱԲՐԻԿԱՆՏՆԵՐ Է. Շվարաուէր եւ Պ. Մաղիշեվ սրանով պատիւ ունեն յայտնել և սպառողներին, որ 1911 թ. յունվարի վերջերում, Թիֆլիսում, Հայոց բազարում, Սարաջէվի քարվանսարայում, Մանթաշէվի քարվանսարայի դիմաց, ԲԱՑՎՈՒՄ է
ՄԵԾԱԳԻՆԱԿԻՒՀԱՏԱՎԱՃԱՌ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ
սարատովեան սարպինկաների և գուլպաների։ Վերոյիշեալ ֆաբրիկանտները յուսով են, որ իրանց ապրանքները համարձակ կարող են մրցել ինչպէս ռուսական, նոյնպէս և արտասահմանեան առաջնակարգ ֆաբրիկաների ապրանքների հետ, որը խնդրվում է անձամբ ստուգել։
Ցարգանոք՝ Է. Շվարաուէր և Պ. Մաղիշեվ
(կ.) 1432. 5—4

Ներսիսեան Հայոց Հոգ. Դպ. Հոգաբարձութեան
խորհրդարանում 1911 թ. յունվար ամսի 11-ին, երեքշաբթի, ցերեկվայ ժամը 12-ին, լինելու է ԱՃՈՒՐԴ (առանց կրկնաճրդի) կապալով տալու մոմավաճառութիւնը հայոց եկեղեցիների և ժողովրդականաց համար։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ Հոգաբարձութեան գրիչանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտ. ժ. 10—3-ը։
1375. 4—4

ԴԵՂԱՀԱՏՆԵՐ
CASCARA MIDY
Ֆրանսիական ժողովրդական միջոց
ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒԹԵԱՆ դէմ։
Ընդունելութեան չափը. 2 դեղահաս երեկոները, պատկերուց առաջ։
Cascara Midy-ն (Կասկարա Միդի) չէ առաջացնում որովայնի մէջ ցաւեր, ոչ էլ հեւց և փորլուծութիւն։
Դեղավաճառանոց MIDY, 140, faubourg St. Honorè. Փարիզ. Ռուսաստանի գլխաւոր դեղավաճառանոցներում։
(8, 18, 28) (M. 305088) 1050. 0—35

ՖԻԼԴԵԼՖԻԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ ՄԵԳԻՑԻՆԱՅԻ ՖԷԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Կատարում է սրսկումներ, վերքի փաթաթումն, գեղերի քսումն (втираніе) և այլն։ Բժշկութիւն տղամարդի սեռական թուլութեան, անկարողութեան, սերմնահոսութեան եւ երազախաբի։ Մասնաւոր էլեքտրական-ե ձեռքով։ Բժշկական մարմնամարզութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին տալիս է խորհուրդներ և ցույց է տալիս հմուտ մասնագէտ բժիշկների—վենեբական, ներքին և այլ հիւանդութիւնների։ Ընդունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր։ Զբաւորներին ձրի միայն չորեքշաբթի օրերը։ Վօրոնցովի արձանի մօտ, Семеновская ул. № 9.
(կ. հ.) 913. 50—40

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հոյս տեսաւ
ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
III պրակը
Գինն է 50 կոպէկ
I և II պրակները Կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձուի կողմից թոյլատրված են գործածութեան միջնակարգ դպրոցներում։ Դիմել՝ Թիֆլիս, «Գուտենբերգ» գրավաճառանոցին, իսկ հեղինակին՝ Ալէքսանդրոպոլ, Լեոն Մանուէլեանին։
(օ.մ.) 16. 3—1

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
Իրաւունքներով
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Օտար լեզուներով
Յոգ. Զաք. Տէր-Ստեփանեանի
Խնդիրների ընդունելութիւնը մինչև յունվարի 15-ը։ Разъѣзжая ул. № 19. противъ памятника Воронцову.
(կ.հ.ու.) 27. 3—1

ԷԶՄԻՒԹՆԱՊԱՏԿԱՆ
„ՏԱՅԼԱՐ“ հողերը
600 դեսեատին տարածութեամբ, որ գտնվում են Կարսի շրջանում, Տրվում են կապալով, 12 տարով։
Սկսուրը լինելու է Ս. Սինոդի Ատեանում այս յունվարի 22-ին, իսկ կրկնաճուրը՝ 31-ին։
Պայմանների հետ կարելի է ծանօթանալ Սինոդի դիւանատանը ամենայն օր առաւօտեան ժամը 9—11-ը։
Անդամ Սինոդի՝ Մատթէոս վարդապետ
(ա.օ.) 14. 3—1

ՍԱՄԱՐՂԱՆԴԻ
հայ գաղութի համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է
միջնակարգ կրթութեամբ և ռուսաց լեզուին տիրապետող
ՄԵՏՆԶԵՆԱՒՈՐ ՔԱՀԱՆԱՅ
Դիմել՝ Самаркандъ. В. Айвазянцу. Торговый Домъ „Таронъ„.
(հ. կ.) 1415. 8—7

(M. 4375) 21. 24—22

ԱԴԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՒ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առեւտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշվապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնարանական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առեւտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց գործնական ձեւով հաշվապահութիւն և ուրիշ մասնագ. առարկաներ 4 ամսվայ ընթացքում։
Կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից ուսուցվում են յունվար ամսից ՕՏԵԼԼԵԶՈՒՆԵՐ և տպագրութիւն (стенографія) ըստ ցանկութեան և արդ վճարով։
Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։
Պարապմունքները սկսվելու են 1911 թ. ՅՈՒՆՎԱՐԻ 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրը ուղարկվում է ձրի։
Դասընթացքն ուսարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատտեստատներ։
Զբաղմունքներ բացվում են քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում ենք դիմել գրասեր կիրակով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22, Телефонъ № 744.
Վերեւում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կ.։
(կ. հ. հ.) 1385. 0—10

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1911 թ.



որ լոյս է տեսնելու Թիֆլիսում շաբաթը մի անգամ.
—o—
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ը առաջիկայ տարում ունենալու է աշխատակիցների ուժեղացրած կազմ։
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ի իւրաքանչիւր համարը լինելու է պատկերազարդ։
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ը հայոց մէջ միակ գիւղատնտեսական շաբաթաթերթն է։
Բաժնեգինը «ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ը առաջիկայ 1911 թուականին տալու է իր բոլոր ՏԱՐԵԿԱՆ բաժանորդներին
ՏԱՐԻՆ 3 բոլոր ծրի նուէրներով
Հետեւեալ նուէրները.
1) Գիւղատնտեսական Օրացոյց 1911 թուականի պատկերազարդված մօտ 40 նկարներով. գիւղատնտեսական զանազան ճիւղերին վերաբերող բազմաթիւ յօդուածներով և հարուստ տեղեկատու բաժնով՝ 3—4 տպ. թերթից—մարտին
2) Բանջարների լաւագոյն սերմեր 1911 թուականի համար, զրանց ցանելու եղանակների ցուցմունքներով։
3) «Գիւղատնտեսական մեքենաների և գործիքների ընտրութիւնը»,—տպագրեց Ա. Աթանասեան։ Պատկերազարդ ձեռնարկ ամեն մի մարդու համար, որ պարապում է գիւղատնտեսութեամբ։
ՐՈՒԲԼԻ «ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ը հայ գիւղացիութեան և գիւղատնտեսութեամբ զբաղվողների համար եղել է անցեալ երկու տարիներում միակ թերթը, որից ընթերցող դարը քաղել են գիւղատնտեսական զանազան ճիւղերին վերաբերեալ գործնական խորհուրդներ և ցուցմունքներ։
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍԸ»-ը աչքի առաջ ունի ոչ միայն Ռուսաստանում՝ Կովկասում և Անդրկովկասում տարածների գիւղատնտեսական կարիքները, այլ և Թիւրքահայաստանի, Պարսկաստանի և Անդրկասպեան երկրի։
Բաժնեգինը

Ռուսաստանում	Արտասահմանում
Տարեկան 3 ր.	Տարեկան 4 ր.
Կէս տարին 2 ր.	Կէս տարին 2 ր. 50 կ.

(հ. շ.) 1378. 10—8

Блоккеръ Какао
ԹԷՅԻՑ ԵՒ ՍՈՒՐՃԻՑ ԱՅԱՒԵԼԱԳՈՅՆ
ՈՉ ՄԻԱՅՆ ԻՐ ԴՈՒՐԵԿԱՆ ՀԱՄՈՎ, ԱՅԼ ԵՒ ԻՐ ՍՆՆԴԱՐԱՐՈՒԹԵԱՄԲ։
Վաճառվում է կօլօնիալ դեղատնային ապրանքների բոլոր յայտնի խանութներում։
ԹԻՖԼԻՍԻ ԱՐԿԱԼԻԿՆԵՐՈՒՄ 1/1, 1/2, 1/4, 1/8 Ֆ.։
Վաճառվում է Կովկասեան Ընկ. դեղատնային ապրանքների խանութում՝ Թիֆլիսում և Բագուում, Պ. Դուրգէնբէգովի և Մ. Նազարբէգովի մօտ։
(II 121984) 1274. 6—3

ՊԱՏԷՓՕՆ
ԵՂԲԱՐՑ ՊԱՏԷ, ՊԱՐԻԶՈՒՄ
ԱՄԵՆԱԼԱՒԱԳՈՅՆ ԽՕՍՈՂ ՄԵՔԵՆԱՅ
ՀԱՐԿԱՒՈՐ ՉԷ ԱՍԵԼԸ ՓՈԽԵԼ, ՉԷ ՓՇՇՈՒՄ, ՊԼԱՍՏԻՆԿԱՆ ՉԷ ՓՈԽՎՈՒՄ
ՆՈՐՈՒԹԻՒՆ! Պատէֆօն առանց բուպօրի
№ 1—ԳԻՆԸ 50 ՐՈՒԲ., № 3—ԳԻՆԸ 65 ՐՈՒԲ.։
Խոշոր քանակութեամբ պլաստինկաներ ամեն լեզուներով
ԿՈՎԿԱՍԵԱՆ ՆՈՐ ԳՐՈՒԱԾՔՆԵՐ, ՀԱՅԱՐԱԿԱԿԱՆ ՍԻՐԵԼԻ ԵՐԳԻՉ Ա. ԴԱՎԻԴՈՎԻ ՆՈՐ ԳՐՈՒԱԾՔԸ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ

Ա. Մ. Դաւիդով
(Արտ. Կայս. Մարիամեան օպերայի)
Գիտարի ներդաշն. պրոֆ. Ամիլիի
24374. «Пожалѣй дѣвичьякой доли».
24376. «Любовь», Նէապոլիտան. բոմանս.

ԴՈՒԷՏՆԵՐ
Զուպրիննիկով և Ցօրսկի
(Արտ. Կայս. Մարիամեան օպերայի)
24355 «Дуэтъ Мельника и Князя», Ռուսալկա» օպերայից, Դարգօմիժսկիի երաժշտ. խմբի ներդաշն.։
24356. «Дуэтъ Финна и Руслана», «Ռուսլան և Լիւդմիլա» օպերայից։

Մ. Ա. Էմակայա
(Օպերային երգչուհի)
27245. «Желаніе», դաշնամ. ներդաշն.
27251. «У тихаго моря», դաշնամ. ներդ.
27246. «Догадайтесь сами», դաշն. ներդ.
27252. «Разъ пошла гулять въ лѣсочекъ».

ՊԱՏԷԻ ԵՐԱԺՇՏԱԽՈՒՄԸ
22957. «Семь сорокъ», հր. Ա. Սապկանի
22972. «Суббота», հրատ. Ա. Սապկանի
22956. «Колумбія», վալս.
22968. «Возвращеніе весны».
51454. «Венгерскій маршъ», «Любовь» օպերէտայից.
51459. «Вальсъ», «Цыг. Любовь» օպերէտայից.

ՄԱՏԱԿԱՐԱՐ «ԿՈՎԿԱՍԵԱՆ ՕՓԻՑԷՐ. ՏՆՏԵՍ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ»
(կ.) Միակ ներկայացուցիչը՝ ԿԱՐԼ ՇՈՒՄԱՆ, Թիֆլիս, Գօլովինսկի պր., 10. 1327. 9—6

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.